AZG NEW PDF.qxd 13/04/2010 21:05 Page 1

Azg Ազգ

14 ԱՊՐԻԼ 2010 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 66 (4446)

ISSN: 1829-1651

# Պարզվում է՝ խոզի գրիպը այնման էլ վտանգավոր չէր

«Ռեգնում» գործակալության տեղեկացմամբ՝ սա խոստովանել է Առողջապահության միջազգային կազմակերպությունը: Կազմակերպության ներկայացուցիչ **Քեյջի Ֆուկուդան** հայտարարել է, որ իրականում գրիպի հարուցիչն այնման էլ վտանգավոր չէր, ինչպես ներկայացվում էր: Ֆուկուդան նաեւ ընդունել է, որ հենց Առողջապահության միջազգային կազմակերպության հայտարարությունների հետեւանքով համաճարակային տագնապ սկսվեց՝ խոզի գրիպի հետ կապված: Իհարկե, կազմակերպության ներկայացուցիչը չի նշել, որ հենց այդ հայտարարությունների պատճառով էր, որ տարբեր երկրներում զանգվածաբար սպառվեց դեղամիջոցների մեծ խմբաքանակ:

# Նախագահ Սարգսյանը պահանջեց նորմալացման գործընթացը չշաղկապել Ղարաբաղի հիմնահարցին

## *Իսկ վարչապետ Էրդողանը, ըստ թուրքական մամուլի, ընդգծեց, որ այդպիսի շաղկապում չկա*

ՀԱԿՈԲ ՉԱՔԲԱՆ

Ապրիլի 12-ին Վաշինգտոնում ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը հանդիպեց Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի հետ: Ելման կետ վերադարձող Հայաստան-Թուրքիա հարաբերությունների նորմալացման գործընթացի ապագայի համար խիստ կարեւոր նշանակություն ունեցող այս հանդիպմանը կայֆէջում հենց դրա ավարտին անդրադարձել էր թուրքական հանրային հեռուստատեսությունը: Թեեւ անդրադարձը, ինչպես նաեւ վարչապետ Էրդողանի՝ նախքան հանդիպումն արած հայտարարությունը, ներկայացրել էինք երեկվա մեր հոդվածում, սակայն տեխնիկական պատճառներով դա դուրս էր մնացել հրապարակման տեսքից:

Թուրքական հանրայինը երեկ վերսին անդրադարձավ հանդիպմանը, դրա հետ նաեւ համանուն մամուլը: Ընդհանուր տպավորությունը հիասթափությունն է, որն, ըստ երեւույթին, Հայոց ցեղասպանության եւ Լեռնային Ղարաբաղի հակամարտության հարցերում ցուցաբերած հաստատակամությամբ թուրքական կողմին պատճառել է ոչ թե Սերժ Սարգսյանի անձը, այլ՝ ի դեմս հանրապետության նախագահի՝ Հայաստանը:

Քանի որ Ցեղասպանության միջազգային ճանաչումը, անկախ հայ-թուրքական արձանագրությունների ստորագրումից, շարունակվում էր, իսկ միջազգային հանրությունը ԵԱՀԿ Մինսկի խմբի երկրների՝ ԱՄՆ-ի, Ռուսաստանի եւ Ֆրանսիայի գլխավորությամբ մերժում էր Հայաստան-Թուրքիա գործընթացը ղարաբաղյան հիմնահարցով պայմանավորելու թուրքական նկրտումները, ուստի նախագահ Սարգսյանը հանդիպմանը ներկայացել էր անհամեմատ նպաստավոր պայմաններում, քան վարչապետ Էրդողանը, իսկ դա ընդարձակել էր արձանագրություններում ամենեւին չհիշատակվող, սակայն դրանց վավերացման համար հայկական կողմին առաջադրվող նախապայմանները ի չիք դարձնելու նրա հնարավորությունները:

*Տես էջ 3*

# «Այո, կարող ենք ճանաչել Հայոց ցեղասպանությունը»

Այս խոսքերն են ամրագրված Ֆոնսբորոյում (Մասաչուսեթս) եւ այլուր ապրիլի 24-ի առթիվ տեղադրված թվային ցուցատախտակների վրա, որոնք հովանավորում է «Արվեստի խաղաղություն» (Peace of Art) կամ «Խաղաղություն արվեստի միջոցով» միավորումը: Տվյալ՝ Ֆոնսբորոյի ցուցատախտակը, որի սեփականատերն է «Քերոլ» գովազդային ընկերությունը, գտնվում է «Ժիլեթ» մարզադահլիճի եւ «Պետրոս Պլեյսի» հարեւանությամբ, հստակորեն տեսանելի բոլորի համար:

Ըստ «Արմինյն միրոր սփեթթեյթր» շաբաթաթերթի հաղորդագրության, «Այո՛, կարող ենք»-ը Բարաք Օբամայի 2008 թվականի նախընտրական մրցարշավի կարգախոսն էր, որին ամբողջ աշխարհը միացավ՝ հավատալով, որ իրոք փոփոխությունների ժամանակը հասունացել է: Ամերիկացիների համար դա մի նոր հույս էր, որ ի վերջո հայերին պատուհասած Ցեղասպանությունը կճանաչվի:

«Իմ նպատակն էր ոչ թե կամ ոչ միայն հաստատել անժխտելի պատմական փաստը, այլեւ մարտնչել հանուն արդարության, ազատության եւ խաղաղության», նշել է ցուցատախտակի կարգախոսի եւ ձեւավորման հեղինակ **Դանիել Վարուժան-Հեջինյանը**, որ բարեխղճորեն եւ ամենայն պատասխանատվությամբ 1996 թվականից զբաղվում է դրանով: Նա նաեւ «Արվեստի խաղաղություն» կրթական միավորման (2003-ին ստեղծված) նախագահն է: Նրա կտավների եւ ցուցատախտակների հավաքածուն մարտի 28-ից ներկայացված է ԱԼՄԱ-ում՝ Ամերիկայի հայկական գրադարան եւ թանգարանում բացված «Ճանապարհ տարիների միջով» ցուցահանդեսում, որը գործելու է մինչեւ մայիսի 2-ը:

Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆ

# Ապրիլի 20-ին Մոսկվայում կհիշեն Ցեղասպանության զոհերին

**«Ռուս-հայկական համագործակցություն» հասարակական կազմակերպությունը՝ Մոսկվայի հայկական կազմակերպությունների ֆորումի հետ համատեղ, ապրիլի 20-ին Մոսկվայի գրականագետների կենտրոնական տանը կկազմակերպի Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված երեկույթ: Երեկույթի պատշգամբում մասում ելույթ կունենան քաղաքական գործիչներ, դիվանագետներ, հասարակական գործիչներ: Ելույթ կունենա նաեւ Ռուսաստանի՝ Ա. Յուրլովի անվան պետական ակադեմիական երգչախումբը:**

**Հիշեցնենք նաեւ, որ 1995-ի ապրիլի 14-ին ընդունած հայտարարությամբ Ռուսաստանի Պետդուման միաձայն ճանաչեց Հայոց ցեղասպանությունը՝ իրականացված «Արեւմտյան Հայաստանի տարածքում»**

# Մեյրան Օհանյանը մեկնեց Մոսկվա

**Ինչպես նախօրոք տեղեկացրել էր «Ազգը», ապրիլի 14-ին Մոսկվայում տեղի կունենա ԱՊՀ երկրների պատշգամբների նախարարների նիստը: Այս կապակցությամբ ՀՀ պատշգամբների նախարար Մեյրան Օհանյանը երեկ մեկնեց Մոսկվա:**

**Ինչպես հայտնեցին ՀՀ ՊՆ տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունից, նիստում կքննարկվեն եւ կստորագրվեն ռազմական համագործակցության բնագավառում մի շարք փաստաթղթեր: Նախատեսված են նաեւ Ս. Օհանյանի երկկողմ հանդիպումները Ռուսաստանի պատշգամբների նախարար Ա. Սերդյուկովի, Բելառուսի պատշգամբների նախարար, գեներալ-լեյտենանտ Յ. Ժադոբինի եւ Ուկրաինայի պատշգամբների նախարար Մ. Եժելի հետ:**

# Մոնիտորինգն անցել է առանց միջադեպի

**Երեկ, Լեռնային Ղարաբաղի հանրապետության իշխանությունների հետ նախօրոք ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, ԵԱՀԿ առաքելությունը պլանային դիտարկում է անցկացրել Լեռնային Ղարաբաղի եւ Ադրբեջանի զինված ուժերի շփման գծում՝ Հադրութի ուղղությամբ:**

**ԼՂՀ պատշգամբների բանակի դիրքերից դիտարկման խումբը գլխավորում էր ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ դեսպան Անջեյ Կասպրշիկը: Դիտարկման խմբի կազմում էին նրա դաշտային օգնականներ Փիթեր Քին (Մեծ Բրիտանիա) եւ Ժասլան Նուրտազինը (Ղազախստան):**

**ԼՂՀ ԱԳՆ մամուլի ծառայության տեղեկացմամբ, դիտարկումն անցել է ըստ սահմանված գրաֆիկի: Դիտարկման ժամանակ կրակի դադարեցման ռեժիմի խախտումներ չեն արձանագրվել:**

# Ջերմաստիճանը կբարձրանա 6-8 աստիճանով

Այսօրվանից սպասվում է օդի ջերմաստիճանի աստիճանական բարձրացում, 4 օրվա ընթացքում ջերմաստիճանը կբարձրանա 6-8 աստիճանով՝ ամսի 17-18-ին Արարատյան դաշտավայրում հասնելով 23-24 աստիճանի, իսկ Լեռնային շրջաններում՝ 15-17 աստիճանի:

«Այսօրվա դրությամբ օդի ջերմաստիճանն ու տեղումները նորմայի սահմաններում են, իսկ տեղացող ցեխոտ անձրեւները պայմանավորված են զուտ հարավային հոսքերով», երեկ «Արցախ» մամուլի ակումբում լրագրողներին տեղեկացրեց արտակարգ իրավիճակների նախարարության Հայդեսիդրոմետ ծառայության օդերեւութաբանության կենտրոնի պետ **Զարուհի Պետրոսյանը**:

Ցեխոտ անձրեւների առաջանալը պայմանավորված է ցցահողերի առաջացումով, որոնք ավազը բարձրացնում են երկինք, իսկ հետո այդ նույն ավազն արդեն թափվում է ցեխոտ անձրեւի տեսքով:

Զարուհի Պետրոսյանը հիշում է շատ ավելի արտառոց դեպքեր, քան ցեխոտ անձրեւներն են. «Օրինակ՝ Իսպանիայում եղել է նաեւ նարնջի անձրեւ, երբ պցահողը քաղած նարնջի բերքը բարձրացրել էր երկինք»:

Բանախոսը նշում է, որ եղանակի փոփոխությունը ծաղկած ծառերի վրա բացասական ազդեցություն էականորեն ունենալ չի կարող, բերքին սպառնացող որեւէ արտառոց երեւույթ առայժմ չի դիտվում:

«Տարվա սեզոնային կանխատեսումները հետեւյալն են՝ ապրիլին տեղումներն ու ջերմաստիճանը լինելու են նորմայի սահմաններում, սակայն անակնկալներ միշտ էլ պետք է սպասել, որովհետեւ եղանակն այն ոլորտը չէ, որտեղ ես կարող եմ հստակ երաշխավորել, որ եղանակի ոչ պարբերական դրսեւորումներ՝ հորդառատ անձրեւներ, կարկուտներ, չեն լինի», հավելեց Զարուհի Պետրոսյանը:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

**ԹՈՒՐՔԻԱ**

# Մահվան սպառնալիք՝ թուրք դերասանուհուն

**Թուրք-հայկական ընկերությանն ուղարկված հակիրճ գրությունը տեղեկացնում է, որ Պելին Բաբու անունով թուրք դերասանուհին «Հաբեր-թուրք» ծրագրի եթեր արձակման ժամանակ ցեղասպանություն բառն արտասանելու համար մահվան սպառնալիքներ է ստացել:**

**Բաթուն ալբանացի մոր եւ նախկինում թուրք դիվանագետ ու խորհրդարանական հոր՝ Ինալ Բաթուի դուստրն է: 1915-ի իրադարձություններին անդրադառնալիս նա ցեղասպանություն բառն է արտասանել՝ բարկացնելով եւ անհամար վիճակի մեջ գցելով ծրագրի համահեղինակներին եւ վարողներին՝ Մուրատ Բարդակչիին եւ Էրհան Աֆյունջուին:**

Հ. Ծ.

# Անկարայի համալսարանում՝ հայերեն դասաժամեր

**Ապրիլի 24-ը մոտենում է, իսկ սա նշանակում է, որ Թուրքիայում հայանպաստ, հայամետ շարժումներն ու բարի ցանկությունները շատանում են: Այսպես, ըստ «Նյուզ.ամ»-ի, որն էլ իր հերթին մեջբերել է «Միլլիեթին», Թուրքիայի բարձրագույն կրթության խորհրդի անդամ **Դուրմուշ Գյունայը** հայտարարել է, որ Անկարայի համալսարանում առաջիկա ուսումնական տարվանից հայերեն կդասավանդվի. «Թուրքիայում հայերեն իմացողներ քիչ կան, իսկ պետական տարբեր կառույցներ հայերեն իմացող մասնագետներ են պահանջում», նշել է Գյունայը:**

**Նույն աղբյուրը վկայում է նաեւ, որ թուրքական Նեւշեհիրի համալսարանի բանասիրական ֆակուլտետում նույնպես կբացվեն հայերենի եւ հունարենի բաժիններ:**

AZG NEW PDF.qxd 13/04/2010 21:10 Page 1



ԱԶԳ **Ընթացիկ**

# Երեւան ժամանեց Սլովակիայի Ազգային խորհրդի նախկին նախագահը

## *Նա «զարմանում եւ զայրանում» է Էրդողանի հայտարարություններից*

Հայաստան ժամանեց Սլովակիայի Ազգային խորհրդի նախկին նախագահ **Պավոլ Հրուշովսկին**, որն այժմ Սլովակիայի Քրիստոնեադեմոկրատական կուսակցության նախագահն է: Հրուշովսկին Երեւանում է Եվրոպայի հայկական միությունների ֆորումի եւ Սլովակիայի հայերի միության նախագահ Աշոտ Գրիգորյանի ուղեկցությամբ: Հիշեցնենք, որ Սլովակիան այն 20 երկրներից է, որոնք ընդունել են Հայոց ցեղասպանության եղելությունը (2004-ին): Սլովակիայում ընդունված հայկական բանաձեւն ունի հետեւյալ բովանդակությունը. «Սլովակիայի Ազգային խորհուրդն ընդունում է 1915-ին Օսմանյան Թուրքիայում կատարված ցեղասպանության փաստը, որի ժամանակ սպանվել են Օսմանյան կայսրության հպատակ հարյուրհազարավոր հայեր, եւ կատարվածը համարում է ոճիր ընդդեմ համայն մարդկության: Սլովակիայի Ազգային խորհուրդը նշում է, որ Թուրքիան մինչեւ այսօր չի ընդունել 1915-ին կատարված Հայոց ցեղասպանությունը, ՀՀ անկախության պահից մինչեւ այսօր Թուրքիան ամբողջովին շրջափակել է հայկական սահմանը: Հայաստանը զրկվել է Եվրոպայի հետ ամենակարճ ճանապարհից եւ չունի Թուրքիայի հետ դիվանագիտական ու տնտեսական հարաբերություններ, Թուրքիայի պառլամենտը ընդունել է օրենք, որով քրեական գործ է հարուցվում Հայոց ցեղասպանության մասին խոսողների դեմ, Թուրքիայում ապրող հայկական փոքրամասնության իրավունքները ենթարկվում են համակարգված ճնշման»: Բացի սրանից, Սլովակիայի Ազգային խորհրդում հայկական բանաձեւն ընդունվել է նաեւ որպես նախապայման՝ Թուրքիայի՝ Եվրոմիությանն անդամակցելու համար:

Հրուշովսկին Երեւան կատարելիք այցի նախաշեմին **Աշոտ Գրիգորյանի** հետ զրույցում նշել է, որ իրեն, ինչպես նաեւ Հայոց ցեղասպանությունն ընդունած երկրների խորհրդարանների պատգամավորներին, «զարմացնում եւ զայրացնում» են Էրդողանի հայտարարություններն այս թեմայով: «Էրդողանն իրավունք չունի մեղադրանքներ ներկայացնելու Եվրոպայի անկախ երկրների խորհրդարանների հասցեին՝ Թուրքիայի իրականացրած Ցեղասպանությանը քաղաքական գնահատականներ տալու համար: Կոնկրետ Սլովակիան քննարկել է այս հարցին քաղաքական գնահատական տալու անհրաժեշտությունն ու առանց դեմ քվեի հաստատել է», Գրիգորյանի հետ զրույցում նշել է Հրուշովսկին:

Հ. ԱՓՅԱՆ

# «Հայ-թուրքական մերձեցման գործընթացը շատ առումներով առեղծվածային է»

«Վաշինգտոնում ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի եւ Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի հանդիպումը պարզապես մի հերթական հանդիպում էր: Նոր զարգացումներ կարելի է ակնկալել մայիսին, իսկ մինչեւ ապրիլի 24-ը, չեմ կարծում, թե կվավերացվեն արձանագրությունները», երեկ «Արցախ» ակումբում՝ ասուլիսի ժամանակ ասաց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախկին արտգործնախարար **Արման Մելիքյանը**:

Բանախոսի կարծիքով՝ հայ-թուրքական մերձեցման գործընթացը շատ առումներով առեղծվածային է, այն նախաձեռնելիս հարկավոր էր առնվազն վստահ լինել, որ գործընթացը կբերի դրական արդյունքների, սակայն կողմերի դիրքորոշումները գնալով կոշտացան ու դարձան ավելի անհանդուրժողական:

Արման Մելիքյանը միանգամայն բնական է համարում թուրք-ամերիկյան հարաբերությունների հետագա վատթարացումն ու սառեցումը:

«Թուրքիայի ռազմավարական դերը ոչ միայն ԱՄՆ-ի, այլեւ Եվրոմիության տերությունների համար նվազելու է, իսկ հայ-թուրքական հարաբերությունների խնդիրը վերը նշված սառեցման գործընթացն արագացնող գործիք է», ասում է Արման Մելիքյանը եւ հավելում, որ Օբաման կարող է ճնշում գործադրել ու պարտադրել Թուրքիային տարանջատել ղարաբաղյան կարգավորման ու հայ-թուրքական մերձեցման գործընթացները, թեեւ իրականում դրանք փոխկապակցված են:

Բանախոսը կարծում է, որ Լեռնային Ղարաբաղի իշխանություններն այսօր Հայաստանի կողմից վարվող քաղաքականության պատանդն են:

«Ես կտրականապես դեմ եմ, որ ԼՂՀ-ն այս օրակարգով մասնակցի բանակցություններին: Բանակցային օրակարգը պետք է փոփոխությունների ենթարկվի», վերջում նշեց Արման Մելիքյանը:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

# «Արդշինինվեստբանկի» վերահսկողական համակարգը աշխատանքային զանցանք է հայտնաբերել

Ինչպես տեղեկացանք «Արդշինինվեստբանկից», բանկում մշտապես իրականացվող ներքին վերահսկողական միջոցառումներից մեկի արդյունքում հայտնաբերվել են «Վարդենիս» մասնաճյուղի կառավարիչ Ա. Բաղդասարյանի աշխատանքային զանցանքները: Այդ կապակցությամբ ձեռնարկված ծառայողական քննությամբ պարզված հանգամանքների վերաբերյալ, բանկը համապատասխան հաղորդում է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազությանը, որի համաձայն քրեական գործ է հարուցվել Ա. Բաղդասարյանի նկատմամբ:

«Արդշինինվեստբանկի» վարչության նախագահ **Ներսես Կարամանուկյանն** այդ առթիվ նշել է. «Բանկում ներդրված եւ մշտապես գործող խիստ ներքին վերահսկողական համակարգը նպատակ ունի ոչ միայն բարձրացնել աշխատակիցների աշխատանքային կարգապահությունն ու պատասխանատվությունը, այլեւ պահպանել եւ բարձրացնել հաճախորդների վստահությունը բանկի նկատմամբ»:

Ա. Մ.

# Սիազանգը կեղծ էր

Ապրիլի 13-ին, ժամը 12-ին ՀՀ ոստիկանություն եւ արտակարգ իրավիճակների նախարարություն ահազանգ է ստացվել, որ Երեւանի թիվ 78 դպրոցում ռումբ է տեղադրված: Դեպքի վայր են մեկնել հատուկ փրկարար ջոկատի հերթապահ խումբը, ոստիկանության, ազգային անվտանգության ծառայության աշխատակիցները: Դպրոցում հատուկ վարժեցված շներով կինոլոգները, ոստիկանության, արտակարգ իրավիճակների նախարարության համապատասխան մասնագետները իրականացված որոնողական աշխատանքներով դպրոցի շենքում եւ հարակից տարածքում ռումբ չեն հայտնաբերել: Ժամը 13-ին դպրոցում վերսկսվել են աշխատանքները:

Մ. ՄԱԿԱՐՅԱՆ

# «Ես իմ կարծիքն ազատ ասելու իրավունք չունե՞մ»

**«Չորրորդ ինքնիշխանություն» թերթի մարտի 4-ի համարում տպագրված «Բացահայտված սադրիչները» հոդվածում գրված է, թե իբր Քանաքեռ-Զեյթուն համայնքում բնակվող Սուսան տատը պատշտոնյաներից փող է խնդրում եւ անեծքներ տարածում Լեւոն Տեր-Պետրոսյանի հասցեին, իսկ դեռեւս 2003 թվականին Սուսան տատը եղել է Ռոբերտ Քոչարյանի դեմ կազմակերպվող հանրահավաքների ակտիվ մասնակիցը:**

**Օրերս 74-ամյա Սուսաննա Սարգսյանը՝ նույն Սուսան տատը, իրեն վարկաբեկող հոդվածը ձեռքին, վրդովված եկավ «Ազգի» խմբագրություն:**

**«Ես ոչ մեկին էլ չեմ անիծել, ուղղակի չեմ ուզում, որ Լեւոն Տեր-Պետրոսյանը նորից նախագահ դառնա: Ի՞նչ է, ես իմ կարծիքն ազատ ասելու իրավունք չունե՞մ, սա ի՞նչ բռնություն է», ասաց Սուսան տատը:**

**Չնայած Սուսան տատը չի ուզում անգամ լսել Լեւոն Տեր-Պետրոսյանի անունը, սակայն պարտաճանաչ գնում է Հայ ազգային կոնգրեսի կազմակերպած հանրահավաքներին:**

**«Հետաքրքրության համար եմ գնում հանրահավաքներին, ոչ թե անիծելու, բայց այնտեղ, որ գովում եմ իմ նախագահին, ասում են՝ մի օգուտ ունի, փող է վերցրել: Ոչ մեկից էլ փող չեմ վերցնում, իսկ Սերժ Սարգսյանին գովում եմ, որովհետեւ թոշակս ժամանակին եմ ստանում, իսկ Լեւոն Տեր-Պետրոսյանի ժամանակ 4 ամիսը մեկ էի թոշակ ստանում, հիմա փողոցները լուսավոր են, ճանապարհները՝ ասֆալտապատ», ասում է Սուսան տատը:**

**Թե Սուսան տատն ո՞ւմ է սիրում կամ չսիրում, դա չէ խնդիրը, այլ այն, որ մարդը պարզապես չի կարողանում ազատ ասել իր կարծիքը:**

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԵՐՍՏ

# Ռազմարդյունաբերության համալիրի զարգացման հայեցակարգ է մշակվում

**Ռազմարդյունաբերության համալիրի զարգացման հարցերը համակարգող միջգերատեսչական հանձնախմբում կայացած անդրանիկ նիստում որոշվել է առաջիկա 3 ամսվա ընթացքում մշակել եւ քննարկման ներկայացնել Հայաստանի ռազմարդյունաբերության համալիրի զարգացման հայեցակարգային դրույթները: Դրան զուգահեռ հանձնախումբը որոշել է քայլեր իրականացնել համալիրի ձեռնարկություններին անհրաժեշտ աջակցություն ցուցաբերելու ուղղությամբ: Նիստը վարող Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Արթուր Բաղդասարյանը նշել է, որ անհրաժեշտ է խթանել կապերը Հայաստանի եւ նախկին խորհրդային պետությունների ձեռնարկությունների միջեւ՝ երկրի պաշտպանունակության բարձրացման եւ անհրաժեշտ տեխնիկայով զինված ուժերի ապահովման նպատակով:**

**«Ռազմարդյունաբերության համալիրի զարգացումը կլուծի նաեւ սոցիալական խնդիրներ, կստեղծվեն նոր աշխատատեղեր: Հայաստանի ռազմարդյունաբերության համալիրում կուսակված ներուժ կա, որը պետք է լայնորեն օգտագործենք, որպեսզի ունենանք կայացած, զարգացած ռազմարդյունաբերության համալիր», Արթուր Բաղդասարյանի խոսքն է փոխանցում Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի մամուլի գրասենյակը:**

Հ. Հ.

# Թուրքիայի հայ համայնքի հաստատություններին նվիրատվություններն արգելող արգելքն հանվել է

**Վերջին ժամանակներում Թուրքիան մեկը մյուսի հետեւից հայատյաց որոշումներ է կայացնում: Օրերս այդ երկրում որոշում կայացվեց՝ թույլատրել հայասանցիների երեխաներին, որոնք Թուրքիայի քաղաքացի չեն, հաճախել Պոլսո հայկական վարժարան: Մինչ այդ վերոհիշյալ երեխաները զրկված էին կրթություն ստանալու իրավունքից, Ստամբուլի նկուղներում էին նրանցից ոմանք «դպրոց» գնում: Այժմ էլ Թուրքիայի փոխվարչապետ Բյուլենթ Առընչի նախաձեռնությամբ հեռախոսազրույց է տեղի ունեցել վերջինիս եւ Պոլսո հայոց պատրիարքարանի հոգեւոր խորհրդի առաջնորդ, Արամ արքեպիսկոպոս Աթեշյանի միջեւ: Առընչը Աթեշյանին հայտնել է, որ հանվել է Ստամբուլի հիմնադրամների տնօրենության դրած արգելքը, որով արգելվում էր նվիրատվություններ կատարել հայ համայնքի հաստատությունների հիմնադրամներին:**

**Սակայն նվիրատվություններն արգելող օրենքը չի էլ եղել, պարզապես գործող օրենքը սխալ է մեկնաբանվել Թուրքիայում, եւ «ներքին կարգով», փաստորեն անօրինական՝ արգելքներ եղել են: Սակայն սրանից հետո արդեն հայ համայնքը նաեւ «չգրված օրենքով» կարող է ստանալ նվիրատվություններ:**

**Թուրքական պետության այս քայլերն, անշուշտ, կարելի է ընկալել որպես ապրիլի 24-ին ընդառաջ «փափուկ բարձի» տեղադրում, սակայն անհնար է չնկատել, որ Թուրքիան ենթարկվում է մեծ ճնշումների:**

Հ. ԱՓՅԱՆ

# Ծխախոտի պահանջարկը նվազել է

Հայաստանում 2010 թ. հունվար-փետրվար ամիսների ընթացքում սիգարետների արտադրության ծավալները նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատությամբ կրճատվել են շուրջ 1,2 տոկոսով:

Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության տվյալներով՝ հաշվետու այս երկու ամիսներին Հայաստանում արտադրվել է 453,6 միլիոն սիգարետ:

Նույն ժամանակահատվածում ֆերմենտացված ծխախոտի արտադրության ծավալներն աճել է 24,7 տոկոսով եւ կազմել 315,7 տոննա:

Ի դեմ, միայն հունվար ամսվա ընթացքում Հայաստանում սիգարետների արտադրության ծավալները նվազել էին 15 տոկոսով:

Հ. Ա.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԹ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետության 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*
/ հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

AZG NEW PDF.qxd 13/04/2010 21:11 Page 1



ԱԶԳ

# Մեկնաբանություն

# Ադրբեջանում փրկությունը ինքնախաբեությունն է

## «Բարեխոս» Թուրքիայի միջոցով ԱՄՆ այցելելու հրավեր կարող է ստանալ Ալիեւ կրտսերը

Միացյալ Նահանգների նախագահ Բարաք Օբամայի հրավերը Հայաստանի նախագահին եւ Թուրքիայի վարչապետին՝ մասնակցելու ապրիլի 12-13-ին տեղի ունեցած միջուկային անվտանգության հարցերով գագաթաժողովին, ի սկզբանե մեկնաբանությունների, իսկ ավելի շատ նաեւ սպասելիքների ու ակնկալիքների տեղիք տվեց:

Այս հրավերի շրջանակներում այնուհետեւ տեղի ունեցած Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի եւ Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիբ Էրդողանի հանդիպումը այնքան թեմաների էր կապվում, որ նրանց հանդիպմանը հատկացված ժամանակն հաստատ անբավարար պիտի լիներ: Կարելի է ենթադրել, որ Սերժ Սարգսյանն ու Էրդողանը առանձնակի շատ հարցերի չեն անդրադարձել 1 ժամ 15 րոպե տեւած հանդիպմանը, հատկապես որ այն ուղեկցվել է թարգմանությամբ:

Հասկանալի էր եւ սպասելի, որ հայկական աղբյուրներն ու ադրբեջանականները, այլ ոչ թուրքականները, այլ կերպ պիտի ներկայացնեին այն, ինչ տեղի է ունեցել Վաշինգտոնում, ընդ որում, Հայաստան-Թուրքիա վաշինգտոնյան հանդիպման մանրամասներ որեւէ մեկը չի կարող վստահորեն ներկայացնել, քանի որ դրանք այդպես էլ չեն դարձել հրապարակային:

Այդուհանդերձ, տեղեկությունները, որ տարածում են ադրբեջանական աղբյուրները, իսկ ավելի ճիշտ՝ քարոզչային միջոցները, այնքան են հեռու հայկական եւ թուրքական կայքէջերի հրապարակումներից, որ զարմանք է հարուցում ապատեղեկատվություն տարածելու այսօրինակ մերկ ու պնդաճակատ մոտեցումը:

Թուրքական «Սաբահ» թերթը տեղեկացնում է, որ լրատվամիջոցի տեղեկություններով, Հայաստանի նախագահ Սարգսյանը Էրդողանի հետ հանդիպմանը պահանջել է, որ Թուրքիան հրաժարվի նորմալացումը Լեռնային Ղարաբաղով պայմանավորող հայտարարություններից: Իսկ Էրդողանն, իր հերթին, ընդգծել է, որ նման պայմանավորում չի կատարվում, եւ ավելացրել է, որ Թուրքիայի նպատակը տարածաշրջանի կայունությունն է:

Այս մեջբերումների ֆոնին լիովին անհեթեթ են հնչում ադրբեջանական կողմի «հուսառաս» հրապարակումները, թե Թուրքիան «իր խոսքի տերն է»: Մասնավորապես, Ադրբեջանի ԱԳՆ դիրքորոշմամբ, ղարաբաղյան հարցին Թուրքիայի մոտեցման առնչությամբ գոհունակություն է արտահայտում Ադրբեջանը: Հասկանալի է, որ ադրբեջանական տվյալներով, Էրդողանն այլ բան պիտի ասած լինի, այլապես ադրբեջանական արտաքին գերատեսչության առնչությամբ ողջախոհության դրսեւորումների ակնկալիքներ ունենալու որեւէ հույս լինել չի կարող:

Ակնհայտ է, որ ճնշումներն իրենց գործն արել են գոնե խոսքով չհաստատելու այն, ինչ Թուրքիայի ներկայացուցիչները անվերջ ներկայացնում էին Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման առնչությամբ, թե հայ-թուրքական սահմանը կբացվի միայն ազատագրված տարածքները Ադրբեջանին հանձնելու պարագայում: Մինչդեռ, դատելով Ադրբեջանի իշխանությունների կողմից կատարելապես վերահսկվող ադրբեջանական լրատվամիջոցների հրապարակումներից, Էրդողանի խոսքերը հայերեն թուրքական աղբյուրներում այլ են ստացվում, ադրբեջանականներում՝ այլ, իսկ հավատալ ադրբեջանական լրահոսին՝ հաստատ իմաստ չունի:

Բնականաբար, իրականությունը ներկայացնելու հավակնություն չի կարող ունենալ որեւէ կողմ, քանի որ թուրքական դիվանագիտությունն անգամ թղթի վրա գրվածից կարող է հրաժարվել առանց այլեւայլության: Միեւնույն ժամանակ, մեծապես կարեւորելով ենթատեքստը, որով արվում է այս կամ այն հայտարարությունը, զարմանալի է, որ ադրբեջանական լրատվամիջոցներում հետեւություններն ամենամերկ տեղում են արվում:

Մասնավորապես, Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուն Հայաստան-Թուրքիա դեռ երկրի շահերի, գոնե դեկլարատիվ մակարդակում, չի կարող հակասել: Ու նաեւ այն, որ այդ խաղաղության հաստատման մի կարեւոր գործոն էլ ղարաբաղյան հակամարտության կարգավորումն է, նույնպես կասկած չի հարուցում, ու, կրկին դեկլարատիվության մակարդակում, հաստատապես հարավկովկասյան տարածաշրջանի երկրների եթե ոչ նպատակներից, ապա գոնե ցանկություններից մեկն է:

Հայ-ադրբեջանական հարաբերությունների համատեքստում հետաքրքրական է Թուրքիայի արտգործնախարարի եւս մեկ հայտարարությունը, որ արվել է Վաշինգտոնում: «Թուրքիայի համար ընդունելի չէ Ադրբեջանի մեկուսացումը գործընթացից», թերեւս նկատի ունենալով հայ-թուրքական գործընթացը՝ հայտարարել է Դավութօղլուն:

Այս հայտարարությունն ինքնին հետաքրքրական է, քանի որ Ադրբեջանը հրավիրված չէր միջուկային անվտանգության գագաթաժողովին: Սակայն, թուրքական որոշ աղբյուրների համաձայն, Թուրքիան «բարեխոսել է» ԱՄՆ-ում, եւ օրերս Միացյալ Նահանգներ կարող է հրավիրվել Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը: Իսկ թե ինչ օրակարգով հանդիպման հեռանկարն է այսպիսի ամերիկյան «բարեհաճության» առիթ տվել, թերեւս իմանանք, գոնե պաշտոնական ձեւակերպումներով:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# No comment. Կարմիր խաչի պատասխանը հայ ռազմագերիների մասին

Թե ինչ նպատակ էր հետապնդում երեկ «Հենարան» մամուլի ակումբում կայացած ասուլիսը, կամ ավելի ճիշտ՝ ինչո՞ւ էր հյուրը՝ Կարմիր խաչի միջազգային կոմիտեի՝ (ԿԽՄԿ) հաղորդակցման ծրագրերի ղեկավար **Ացոն Ասաբացյանը** համաձայնել հանդիպել լրագրողների հետ, եթե հրաժարվելու էր պատասխանել հարցերին, անհասկանալի էր:

Ասաբացյանի շուրթերից հնչող հիմնական արտահայտություններն են՝ «Ես այդ հարցին չեմ կարող պատասխանել», «Դրա վերաբերյալ ոչինչ ասել չեմ կարող»:

Ասաբացյանը նախ հրաժարվեց տեղեկություններ հրապարակել, թե ինչպես են հայ գերիները պահվում ադրբեջանական կողմում, ինչպիսին է նրանց վիճակը՝ պատճառաբանությամբ, որ եթե տվյալներ հրապարակի, ապա հետագայում չեն կարողանա այցելել այդ մարդկանց: Գաղտնիություն պահելու սկզբունքը շարունակվեց նաեւ, երբ հարց հնչեց Ադրբեջանում հայ գերիների իրավունքների պաշտպանության վերաբերյալ:

Հայկական կողմը բազմիցս հայտարարել է, որ ադրբեջանական կողմը խախտում է Ժնեւյան կոնվենցիայի դրույթները: Հայաստանում այսօր կան մեկ ադրբեջանցի ռազմագերի եւ մեկ քաղաքացիական անձ, մինչդեռ Ադրբեջանում՝ վեց հայ ռազմագերիներ եւ սահմանը հատած մեկ ընտանիք: Թվերի նման տարբերության մասին էլ մասնագետը ոչինչ չասաց. «Չեմ կարող բացատրել, այսքանը»: Միայն հավելեց, որ «Երազ» մեթենայով Նախիջեւան հատած ընտանիքի հետ որեւէ կապ չեն պահպանում, որովհետեւ դրա համար նրանց ո՛չ ընտանիքի հարազատները, ո՛չ էլ պետությունը չեն դիմել: Մնացյալ վեց ռազմագերիներին կազմակերպության մասնագետները պարբերաբար այցելում են: Ադրբեջանում եւ Հայաստանում ռազմագերիներին թույլատրվում է կապ պաշտպանել նաեւ ընտանիքի անդամների հետ:

Դիտարկումը թեեւ ադրբեջանական կողմը կարճ ժամանակով է անվտանգության երաշխիքներ տալիս գերիների հանձնման ժամանակ, Ասաբացյանը հերքեց, ասելով, որ վերջին անգամ որեւէ դեպք չի արձանագրվել, երբ հայկական կողմը մարդասիրական նախաձեռնությամբ գերի էր հանձնում ադրբեջանական կողմին: Օրեր առաջ ՀՀ ՋՈՒ ԳՇ ներկայացուցիչները հայտարարեցին, որ ադրբեջանական կողմը ամիսներով խոչընդոտում է Կարմիր խաչի ներկայացուցիչներին՝ տեսակցել գերիների կամ կապ հաստատել ընտանիքների հետ: Եղել են դեպքեր, երբ Ադրբեջանի ԱԱԾ աշխատակիցները ներկայացել են որպես Կարմիր խաչի ներկայացուցիչներ եւ փորձել համոզել գերիներից մեկին չվերադառնալ հայրենիք: Ասաբացյանը պատասխանեց, որ իրենք հայրենադարձության գործընթացի ժամանակ չեզոք միջնորդ են: «Այդ կապակցությամբ ոչինչ ասել չեմ կարող: Երբ կողմերը համաձայնության են գալիս հայրենադարձության վերաբերյալ եւ դիմում են մեզ, տրամադրում ենք մեր ծառայությունը, որպեսզի այդ գործողությունը կատարվի», ասաց նա: Մասնագետը ավելացրեց, որ մինչ ռազմագերու վերադարձնելը ԿԽՄԿ ներկայացուցիչները հանդիպում են նրանց հետ առանց վկաների՝ հավատիանալու, որ հանձնումը ռազմագերու կամքով է:

Ասաբացյանը որեւէ նորություն չհաղորդեց նաեւ, թե մոտ ապագայում սպասվո՞ւմ են ռազմագերիների փոխանակում եւ հայրենադարձում:

«Եթե նման բան լինի ու մեզ դիմեն, մենք մեր օգնությունը կառաջարկենք»:

ՀԱՄՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

# Նախագահ Սարգսյանը պահանջեց նորմալացման գործընթացը չշաղկապել Ղարաբաղի հիմնահարցին

*1-ին էջից*

Այլ կերպ, Հայաստանը չէր ընկրկել տարածաշրջանային գերտեսության հավակնություններ ունեցող Թուրքիայի առջեւ, ինչը հանդիպումից թուրքական մամուլի հիասթափության մեկ այլ պատճառ է: Եթե պաշտոնական Վաշինգտոնը հաստատակամ լինի Հայաստան-Թուրքիա նորմալացման գործընթացի նկատմամբ որդեգրած դիրքորոշման հարցում, ապա չի բացառվում, որ թուրքական կողմի համար հիասթափությամբ ավարտվի վարչապետ Էրդողանի հանդիպումը նախագահ Բարաք Օբամայի հետ, որը նախատեսված էր 20 րոպե, տեղի էր ունենալու երեկ:

Ի դեպ, նախորդ օրը նախագահ Օբամայի հետ հանդիպեց Սերժ Սարգսյանը: Հանդիպումը տեւել է 45 րոպե, որի ավարտին, ինչպես թուրքական մամուլն է նշում, Սպիտակ տունը հաղորդագրություն է տարածել: Համաձայն դրա, Բարաք Օբաման Թուրքիայի հետ հարաբերությունների նորմալացման ուղղությամբ գործադրած ջանքերի համար գովեստով է արտահայտվել ՀՀ նախագահի մասին եւ դիմելով հայկական ու թուրքական կողմերին, կոչ է արել, որ նրանք նպաստեն «հարաբերությունների նորմալացման գործընթացի առաջխաղացմանը»:

Ինչ վերաբերում է Սարգսյան-Էրդողան հանդիպմանը, որին մասնակցել են նաեւ երկու երկրների արտգործնախարարները՝ Էդվարդ Նալբանդյանը եւ Ահմեդ Դավութօղլուն, ինչպես նաեւ ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Վիգեն Սարգսյանն ու Թուրքիայի վարչապետի հատուկ ներկայացուցչի կարգավիճակով Երեւան գործուղված ԱԳՆ խորհրդական Ֆերիդուն Սինիրլիօղլուն, ապա դա, թուրքական հանրայինի վկայությամբ, տեւել է մեկուկես ժամ: Կողմերն այս ժամանակահատվածում կենտրոնացել են վարչապետ Էրդողանի՝ Սինիրլիօղլուի միջոցով ՀՀ նախագահին փոխանցած նամակում արծարծվող հարցերի վրա: Հանդիպմանը կողմերը որոշել են արտգործնախարարների համատեղ աշխատանքի միջոցով շարունակել արձանագրությունները կյանքի կոչելու ջանքերը:

Թուրքական հանրայինի վկայությամբ, ՀՀ նախագահը լրագրողներին հայտարարել է. «Մենք Ցեղասպանության իրողությունը վիճարկող որեւէ քայլ կատարելու մտադրություն չունենք: Մտադիր չենք նաեւ երեւակայական տպավորություն ստեղծել, թե Թուրքիան Լեռնային Ղարաբաղի խաղաղ կարգավորման գործընթացում դրական դեր է ստանձնել: Գիտենք որ առաջանում ենք մինչ այդ չհաղթահարված ճանապարհով: Համոզված եմ, որ Հայաստանը պատվով կհաղթահարի նաեւ այս դժվարությունը»:

Թուրքիայի վարչապետի հետ Հայաստանի նախագահի հանդիպումը լուսաբանելու առումով, թուրքական հանրային հեռուստատեսությանը լրացնում են համանուն թերթերը: Դրանցից մասնավորապես «Սաբահը» գրում է, որ հանդիպումն անցավ «սառը» մթնոլորտում, որտեղ Էրդողանը հաստատեց իր նվիրվածությունը արձանագրություններին եւ ընդգծեց երկու երկրների հարաբերությունների նորմալացմանն ու Կովկասում խաղաղության հաստատմանը միտված արձանագրությունների տառին եւ ոգուն հավատարիմ մնալու անհրաժեշտությունը:

Ըստ «Սաբահի», նախագահ Սարգսյանի արձանագրությունների վավերացման գործընթացին մեկնարկ տալու պահանջին ի պատասխան, վարչապետ Էրդողանն ասել է. «Մենք հավատարիմ ենք արձանագրությունների առնչությամբ տված մեր խոսքին: Սակայն դրանց համար Մեջլիսում անհրաժեշտ է բարենպաստ քաղաքական մթնոլորտի գոյացումը: ԱՄՆ-ի եւ Շվեյցարիայի խորհրդարանները հաջորդաբար որոշումներ (Հայոց ցեղասպանության ճանաչման) են ընդունում, եթե այս իրավիճակում ներկայացվեն, ապա Մեջլիսը կմերժի արձանագրությունները: Ներկա պահին դեռ բարենպաստ մթնոլորտ չկա»:




Այնուհետեւ Էրդողանը Սարգսյանի ուշադրությունն է հրավիրել ՀՀ Սահմանադրական դատարանի՝ արձանագրությունների առնչությամբ ընդունած որոշման վրա, հիշեցրել է «լռություն պահպանելու» պայմանավորվածությունը խախտելու մասին, որը փետրվարին ԱՄՆ-ի միջնորդությամբ ձեռք է բերվել Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ, պահանջել է խուսափել նորմալացման գործընթացին վնասող հայտարարություններից: Նախագահ Սարգսյանն իր հերթին ասել է, որ այդ հարցում զգայուն է նաեւ Հայաստանը: Կողմերը ընդհանուր հայտարարի են եկել 2 երկրների արտգործնախարարների համատեղ աշխատանքի շուրջը, որի շրջանակներում երեկ սպասվում էր Նալբանդյանի եւ Դավութօղլուի հանդիպումը:

«Սաբահի» տվյալներով, նախագահ Սարգսյանը պահանջել է Հայաստան-Թուրքիա նորմալացման գործընթացը չպայմանավորել Լեռնային Ղարաբաղի գործընթացով, իսկ Էրդողանն ընդգծել է, որ դրանք չեն շաղկապվում, ապա եւ ավելացրել է. «Մեր նպատակը տարածաշրջանի կայունությունն է: Արձանագրություններն այդ հարցում, նույնիսկ չվավերացված, դրական ներգործություն ունեցան: Առաջխաղացում է արձանագրվել Մինսկի գործընթացում»:

Հոդվածը գրելու պահին Օբամա-Էրդողան հանդիպումը դեռ չէր կայացել, սակայն ակնհայտ է դրա ազդեցությունը ինչպես Սարգսյան-Էրդողան հանդիպման արդյունքների, այնպես էլ Հայաստան-Թուրքիա հարաբերությունների նորմալացման գործընթացի եւ Թուրքիայի ազգային մեծ ժողովում հայ-թուրքական արձանագրությունների վավերացման վրա:

AZG NEW PDF.qxd 13/04/2010 21:09 Page 1



# Հայոց պատմության երախտավորը

## Լեոյի ծննդյան 150-ամյակի առթիվ

***Յուրաքանչյուր սերունդ իր անցյալի հիշողությունից վերցնում, ժամանակի ընթախույզ հայացքով գնահատում եւ գալիքին է փոխանցում անուններն այն արժանահիշատակների, որոնք կատարած վաստակի համար արժանանում են ժողովրդի անանց հարգանքին ու սիրուն: Մեր ժողովրդի համար այդպիսի անուններից է Լեոն (1860-1932):***

Ծնվել է Շուշի քաղաքում 1860 թ. ապրիլի 14-ին, մահացել 1932 թ. նոյեմբերի 14-ին Երեւանում: 1878թ. ավարտել է Շուշվա քաղաքային վերակազմյալ դպրոցը: Այնուհետեւ ծննդավայրում ու Բաքվում աշխատել է որպես նոտարական գրագիր, հեռագրիչ, «Արոր» տպարանի կառավարիչ: Բարձրագույն կրթություն չի ստացել: 1895-1906թթ. Թիֆլիսում հրատարակվող «Մշակ» թերթի մշտական աշխատակիցն էր եւ քարտուղարը: 1906-1907թթ. դասավանդել է Էջմիածնի Գեւորգյան ճեմարանում, ապա տեղափոխվել Թիֆլիս եւ ամբողջովին նվիրվել գիտական աշխատանքի: 1924թ. հրավիրվել է Երեւան եւ պետական համալսարանում հայագիտական տարբեր առարկաներ դասավանդել մինչեւ կյանքի վերջը:

Լեոն գրել սկսել է 1877 թվականից, առաջին թղթակցությունը տպագրել է «» թերթում եւ ավելի քան կես դար աշխատակցել հայ պարբերական մամուլին:

Բավական է թերթել XIX դարի վերջին քսանամյակի եւ XX դարի առաջին տասնամյակների կովկասահայ թերթերն ու ամսագրերը, թռուցիկ հայացք նետել ժամանակաշրջանի հայագիտական գրականությանը՝ համոզվելու համար, որ 18 տարեկանում ռուսական նարոդնիկական շրջաններում մեծ համարում ունեցող գերմանական գրող Ֆրիդրիխ Շոլիհագենի «Մեկը դաշտում զինվոր չէ» նշանավոր վեպի հերոսի Լեո անունը վեցրած-յուրացրած Առաքել Բաբախանյանը որպես գրող, գրական քննադաս եւ հրապարակախոս ժամանակաշրջանի նշանավոր դեմքերից էր: Լեոն է գրել ռուսահայ գրականության առաջին պատմությունը, ստեղծել ըստ պատմաշրջանների գրական հոսանքների ամբողջական պատկերը՝ հայ գրականագիտական միտքը հարստացնելով նոր հասկացություններով եւ ըմբռնումներով: Նրա պայքարը գրական հետադիմական հոսանքների դեմ պատկանում է հայ քննադատական մտքի արժեքների թվին:

Լեոյի դիմադարձը գեղարվեստական գրականությունից եւ գրականագիտությունից դեպի հայ ժողովրդի հասարակական մտքի եւ քաղաքական պատմության ուսումնասիրման ասպարեզ հիմնականում տեղի ունեցավ XIX դարի վերջին տասնամյակին, պատմական մի ժամանակաշրջանում, երբ սխոլաստիկայի հիմքով հասակ առած կղերա-պահպանողական պատմագրությունը նահանջել էր իր նախկին դիրքերից՝ տեղի տալով ազգային-պահպանողական եւ լիբերալ-բուրժուական ուղղություններին: Ընտրելով վերջին ուղղությունը, նա կարողացավ առաջ անցնել ոչ միայն Մ. Էմինից եւ Ա. Գարագաշյանից, Ք. Պատկանյանից եւ Գր. Խալաթյանից, հայագետ Մխիթարյաններից, այլեւ Ս. Պալասանյանից եւ Ալ. Երիցյանից: Լեոյի գիտական ուղղությունը ռեալիզմն էր, համոզմունքը կամ դավանանքը՝ լիբերալիզմը: Նրա բոլոր մինչխորհրդային գրվածքները չէին խոտորվում այն սկզբունքներից, որոնց պաշտպանն էր Գր. Արծրունու «Մշակ» թերթը: Լեոյի համար մարդկային հասարակության մեջ չկան հանկարծակի թռիչքներ, այլ ամեն ինչ, այդ թվում եւ ազգերը, բարձրանում են, առաջադիմում ասիճաններով: Չնայած Լեոյի գիտական բեմելի պահին հայ պատմագիտության ազգային-պահպանողական ուղղությունը, կղերականի համեմատությամբ, նոր ասիճանի էր բարձրացրել պատմության ուսումնասիրությունը, բայց, այնուամենայնիվ, տառապում էր մեթոդաբանական եւ պատմաիմաստասիրական սահմանափակ հայեցողությամբ եւ չէր կարողանում պատմությունը դուրս բերել մտածողության իդեալիստական շրջանակներից: Տակավին 1890-ական թվականներին Լեոն դժգոհում էր, որ չկա ժողովրդի քաղաքացիական եւ սոցիալական հարաբերությունների պատմությունը, որ հայոց պատմությունն առավելապես դիտվում է արտաքին պատերազմների եւ ներարքավ դեպքերի համակցության մեջ: Նա համամիտ էր Ռաֆֆու այն հարցադրմանը, թե «մեր պատմության մեջ գրեթե մոռացված է ամբոխը»: Պատմության մեջ ժողովրդի դերի կարեւորման մեթոդաբանությամբ Լեոն ընության առարկա դարձրեց ամբողջ հայ ժողովրդի պատմությունը՝ սկսած հնագույն ժամանակներից մինչեւ հայ-ռուսական հարաբերությունները, Հայկական հարցն ու արեւմտաեվրոպական դիվանագիտությունը, ընդսմին, միաստված հետաքրքրություն հանդես բերելով ժողովրդի քաղաքական կողմնորոշումների ինչպես պատմական հանգամանքների, այնպես էլ դրանց շարժիչ գաղափարաբանության նկատմամբ: Ստեղծագործելու այս մեթոդաբանությամբ նա ստեղծագործ գրիչը թափանցեց հայոց պատմության բոլոր սահմանները: Հայաստանի հին, միջնադարյան ու նոր պատմության ամենահրատապ եւ կենսական խնդիրների, հարեւան երկրների հետ զանազան առնչությունների, համաշխարհային տարբեր անցքերի, դեպի Ռուսաստանի հետ համագործակցության տանող փոխհարաբերությունների՝ Լեոյի խորաստ գնահատականները մեծ նշանակություն են ունեցել հայ պատմագիտության զարգացման համար, նկատելի ազդեցություն գործել հայ հասարակագիտության մեջ ազգային մտածելակերպի ձեւավորման վրա:

Լեոն կարողացել է հատկապես վեր հանել հայ ազատագրական պայքարի վերջին դարերի մանրամասները: Մինչխորհրդային շրջանի իր աշխատություններում («Ստեփանոս Նազարյանց», «Գրիգոր Արծրունի», «Հայկական տպագրություն», «Հովսեփ կաթողիկոս Արղության», «Պատմություն Երեւանի հայոց թեմական հոգեւոր դպրոցի» եւ այլն) Լեոն շատ բարձր էր գնահատում հայերի ռուսական կողմնորոշումը եւ Արեւելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին: «Ռուսական զենքը ոչ միայն բերում էր խաղաղություն եւ հանգստություն,- գրել է Լեոն,- այլեւ կապող մի կամուրջ էր այնքան դժբախտություններ տեսած մեր երկրի եւ եվրոպական քաղաքակրթության միջեւ: Ռուսաստանի հովանավորության տակ մտած ժողովուրդները այլեւս ոչ մի հոգս չէին կարող ունենալ, բացի մտավոր եւ կուլտուրական առաջադիմությունից»: Մեծ պատմաբանի այս մտայնությունը բխում էր այն իրադարձությունից, որ ստեղծվել էր արեւելահայ կյանքում Արեւելյան Հայաստանը Ռուսաստանին միացվելու շնորհիվ: Հաստատված խաղաղությունը, կյանքի եւ գույքի համար ստեղծված անվտանգությունը նախադրյալներ ստեղծեցին արեւելահայերի ազգային համախմբման համար:

Լեոն խորքով եւ լայնքով ուսումնասիրել է արեւմտահայության ողբերգական դրության պատճառները, եվրոպական դիվանագիտության խարդավանքների առարկա Հայկական հարցը, հաստատագրել Թուրքիան մեծ տերությունների կցորդ դարձնելու մրցապայքարի արդյունքներով նրա հպատակ քրիստոնյա ժողովուրդներին սպասվելիք էլ ավելի ահավոր աղետները: Արեւելյան ճգնաժամին եւ Հայկական հարցին նվիրած իր աշխատություններում Լեոյին հաջողվել է պատմականության անշեղ դիրքերից լուսաբանել միջազգային իրադրության, Թուրքիայի ներքին ու արտաքին կացության հանգուցային հիմնախնդիրները, այն հիմնական դեպքերի ընթացքն ու դեմքերի գործողությունները, որոնք ավելի են առնչվել արեւմտահայության ճակատագրին, Հայկական հարցի շուրջը ծավալված դիվանագիտական գործողություններին: Մեծ հետաքրքրությամբ են այսօր էլ կարդացվում ներքին դրամատիզմով հագեցված Հայկական հարցի վերաբերյալ նրա «Գլադստոն» եւ «Հայոց հարցի վավերագրերը» աշխատությունները, բազմաթիվ հոդվածները, որոնցում ցույց է տրվում, որ մեծ տերությունները նպատակ էին հետամտում բոլոր միջոցներով կանխել 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմում ռուսական բանակների հաղթանակին համապատասխան Ռուսաստանի քաղաքական եւ դիվանագիտական վերընթացը: Վավերագրերի եւ համոզիչ տրամաբանության լեզվով Լեոն ընթերցողի առջեւ բացում է աշխարհի վերաբաժանման, նոր գաղութների նվաճման համար գոտեմարտի բռնված եվրոպական տերությունների հանցավոր դիվանագիտության խարդավանքները Հայկական հարցում: Լեոն բարձրացնում է վարագույրն այն նենգությունների, որոնցով տերությունները 1890-ական եւ 1910-ական թվականներին արեւմտահայությանը ոչ միայն չպաշտպանեցին թուրքական բարբարոսներից, այլեւ անմիջական մասնակիցը դարձան Հայոց ցեղասպանության իրականացմանը: Անշուշտ, Լեոն եւս ունեցել է արեւմտյան դիվանագիտության հայանպաստ խոսքումները դյուրահավատորեն ընկալելու՝ ժամանակի հայ հասարակական մտքի շատ ներկայացուցիչներին ուղեկցող թուլությունը: Նա ավելորդ ներբողներ է շռայլել անգլիական լիբերալիզմի պարագլուխ Գլադստոնին՝ նրան համարելով «մարդասեր, տանջվածների պաշտպան, ազգերի եղբայրության հզոր ախոյան» եւ այլն: Սակայն, ի պատիվ իրեն, հետագայում նա Գլադստոնին բնութագրեց այնպես, ինչպիսի իրականում կար: Չորս անգամ Անգլիայի վարչապետի պաշտոնին տիրացած Գլադստոնին նա բնութագրեց որպես մոլի իմպերիալիստի, գաղութային քաղաքականության հմուտ գործադրողի ու ճնշված ժողովուրդների ազատագրական պայքարի թշնամու: 1925 թ. «Անցյալից» աշխատության մեջ Լեոն գրում է. «1880-ական թվականների Գլադստոնի փորձը պետք է լավ խրատած լիներ հայկական երեխայությանը, պարզ ցույց տալով նրան, որ Անգլիան Անգլիա է, եւ ոչ մի նշանակություն չունի, թե ով է այսօր նրա առաջին մարդը: Գլադստոն, Սոլսբերի, Բիկոնսֆիլդ,- որոնք ա-

նուններ են փոփոխական, հեղհեղուկ, անկայուն: Անփոփոխը անգլիական արշինն է եւ նրա ծառա ու սպասավոր ամենը, անգամ «մարդասերները», մեծ լինեն նրանք, թե փոքր-միեւնույնն է»: Հայկական հարցի նկատմամբ ազգիական քաղաքականության ողջ գործընթացի վերաբերյալ Լեոն ընդհանրացել է. «Բայց ոչինչ եւ ոչ մի բան չէր լուծվում: Լոնդոնը Լոնդոն էր մնում՝ համաշխարհային գիշատիչ բանկ, իսկ Մուշի դաշտը՝ լլկանքների, լացի ու աղեսի դասական հայրենիք»:

Լեոն ցասումնալից արտահայտություններով է բնութագրել ոչ միայն Անգլիայի, այլեւ Ֆրանսիայի, Գերմանիայի եւ մյուս մեծ տերությունների հակահայկական քաղաքականությունը: Անդրադառնալով Կ.Պոլսի հայկական կոտորածներին՝ Լեոն գրել է. «Կոտորածի մյուս օրը, երբ Կ. Պոլսի փողոցները դեռ կարմրած էին հայի արյունից, Վիլհելմ կայսրն Աբդուլ Համիդին ընծա էր ուղարկում իր պատկերը, զարդարված թանկագին քարերով»: Ըստ Լեոյի, մեծ տերությունների հայկական քաղաքականության արդյունքն այն եղավ, որ «այժմ Թուրքաց Հայաստան չկա: Նա դարձել է մի վիթխարի գերեզման, որի վրա հավերժապես արձանագրված է. «Եվրոպայի զոհը»: Լեոյի աշխարհայացքը բարդ էր ու հակասական: Խորհրդային շրջանում գրած մի քանի աշխատություններում («Խոջայական կոմիսալը եւ նրա քաղաքական-հասարակական դերը հայերի մեջ», «Թուրքաց հեղափոխության գաղափարաբանությունը» եւ այլն) Լեոն բացասական վերաբերմունք էր հանդես բերում դեպի հայերի ռուսական կողմնորոշումը, հայ ազատագրական շարժման գաղափարաբանությունը եւ նրա գործիչները՝ տրամագծորեն հակադիր մինչխորհրդային ժամանակաշրջանում իր դավանած դրական սկզբունքներին: Սակայն, անգամ իրարամերժ տեսակետների արտահայտման պայմաններում, մեծ գիտնականի նրա տիրապետող գաղափարը զգայուն էր հայության համազգային ճակատագրին առնչվող քաղաքական կացությունները գնահատելիս: Նրա բոլոր պատմագիտական աշխատությունների գլխավոր լեյտմոտիվը մեկն է՝ անցյալի էջերում, անցյալի փորձի մեջ որոնել ազգի ազատագրության եւ աղետների ամենից հուսադրող ուղիների բանալին: Պատահական չէ, որ ինչքան էլ նրա միտքն ակոսեր պոզիտիվ իրականության եւ իդեալիստական երեւակայության սահմանները, աչք փակեր պատմական իրողությունների առջեւ ու խտացներ ռուսական ցարիզմի «խարդախ» քաղաքականության գույները, պատմական դետերմինիզմի դիրքերից ելնելով հակադրված էր ընդունել, որ «եսամոլ ու շահամոլ» ռուսական նվաճողականությունը այնուամենայնիվ «նման չէր նախորդներին գեթ նրանով, որ անաղարտի ամայություն չէր բերում երկրներին եւ կոտորած ու ավերում՝ նրա բնակիչներին»: Սա նշանակում է, որ Լեոն պատմաբանը, քաղաքական հայացքը շարունակում էր ունենալ այն խոր գիտակցությունը, որ ձգտելով գրավել Մեծավոր Արեւելքի որոշ տարածքներ, ջանալով դրանց ենթարկել իր ցարական վարչակարգին, Ռուսաստանը կայսրությանը միացված տարածքները ակամա ներգրավվում էր կայսրության հզոր շարժումների մեջ՝ հնարավորություն տալով հաղորդակցվելու առաջադիմական շարժումներին եւ եվրոպական մշակույթին:

Այսպես էին մտածում Լեոյին նախորդած եւ նրան ժամանակակից բոլոր հայ մեծերը:

**ՆՈՐԱՅՐ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ**
**Պատմագիտության դոկտոր**

ՀԱՄԱՌՈՏ

## Եվրոպայի հայերն էլ նամակ ուղարկեցին Վաշինգտոն

**«Աշխարհասփյուռ հայության տառապանքները հարգելու, Հայոց ցեղասպանության փաստը Թուրքիայի կողմից անտեսելու, արդարությունը կեղծելու» հարցերն են բարձրաձայնված Եվրոպայի հայկական միությունների ֆորումի՝ ԱՄՆ նախագահ Բարաք Օբամային ուղղված նամակում: Հիշեցնենք, ապրիլի 24-ին ընդառաջ, նման մի նամակ Օբամային ուղղել էին Ամերիկայի հայերը: Եվրոպայի հայերի ուղերձում նշված է, որ Ցեղասպանության փաստի վավերացումը կստիպի Թուրքիային հարգել միջազգային կարծիքը եւ բարիդրացիական հարաբերություններ հաստատել իր կարեւոր հարեւան Հայաստանի հետ: «Հավատացեք, որ սա ամենահրատեսական ու արդարացի ուղին է հայ-թուրքական հարաբերությունների խնդրի լուծման հարցում», նշված է նամակում: Եվրոպայի հայերը, շնորհակալություն հայտնելով Օբամային, որ իր նախորդ տարվա ուղերձում օգտագործել էր «Մեծ եղեռն» եզրույթը, նշել են. «Դա ընդունելով որպես առաջընթաց՝ միաժամանակ խնդրում ենք այս տարվա Ձեր ելույթում օգտագործել «Ցեղասպանություն» միջազգային բառեզրը եւ հնարավորություն տալ ԱՄՆ-ի Կոնգրեսին հաստատելու թիվ 252-րդ բանաձեւը՝ ընդունված Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի կողմից», նշված է ուղերձում:**

Հ. Ա.

## Մմահոնին հավատարիմ են, որ ժխտի Հայոց ցեղասպանությունը

**Վաշինգտոնից «Ամերիկայի կիպրական գործողությունների ցանցը» (Սայփրըս էքշըն նետուորք ըվ Ամերիկա) տեղեկացնում է, որ թուրքերը «Ամերիկայի թուրքական կոալիցիայի» միջոցով հավատարիմ են Նյու Յորքի 13-րդ կոնգրեսական տարածաշրջանի ներկայացուցիչ դեմոկրատ Մայքլ Մմահոնին, որպեսզի նա ժխտի Հայոց ցեղասպանության փաստը մարտի 4-ի բանաձեւի քննարկման ժամանակ:**



**Ըստ «Արմենյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթի, թուրքերը Մմահոնին օգտագործում են այն բանից հետո, երբ հունվարին Ռոբերտ Ուեքսլերը հրաժարական տվեց: Մմահոնը Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների եվրոպական ենթահանձնաժողովի անդամ է դարձել 2009-ին: Նա թուրքական «խմբակցությանն» է միացել 2009-ի մայիսի 10-ին: Հետագայում նա միացել է նաեւ «Հելլենական խմբակցությանը»՝ իբր պաշտպանելու համար Կիպրոսի հիմնահարցերը: «Սակայն ինչպե՞ս կարող է մեկը, ով ժխտում է հայերի Ցեղասպանությունը, պաշտպանել հույների կամ կիպրոսցիների դատը», իրավացի հարցադրում է անում շաբաթաթերթը:**

**Դեմոկրատ Դեյվիդ Սոթը (որը նույնպես դեմ քվեարկեց 252 բանաձեւին) ու Մայքլ Մմահոնը ամենաթունդ թուրքամետներն են համարվում ենթահանձնաժողովում, ըստ վերոնշյալ կիպրական ցանցի:**

Հ. Ծ.

AZG NEW PDF.qxd 13/04/2010 21:05 Page 1



# Ադրբեջանում զարմացած են Ալիեւի վերջին հայտարարությունից

## *Որը հակասում է մադրիդյան սկզբունքներին*

Որ Ադրբեջանում որոշ բարձրաստիճան իշխանավորներ չգիտեն կամ թերի գիտեն, կամ «անհարմար» են զգում խոսովանել, որ գիտեն մադրիդյան սկզբունքների մասին, հայտնի է մեր թերթի նախորդ հրապարակումներից: Ինչպես արդեն տեղեկացրել է «**Ազգ**»-ը, Մինսկի խմբի ռուսաստանցի համանախագահ **Յուրի Մերզլյակովը** վերջերս Երեւանում հայտարարեց. «Նորացված մադրիդյան սկզբունքներ գոյություն չունեն, կան ընդամենը առաջարկություններ. դրանք աշխատանքային պահեր են»: Այնինչ Բաքուն շարունակում է ամենաբարձր մակարդակով «համաձայն լինել նորացված մադրիդյան սկզբունքներին», այսինքն՝ ինչի՞ն է համաձայն Բաքուն, երբ այն, «ինչին համաձայն է», պարզապես գոյություն չունի, եւ սա ոչ թե Հայաստանի իշխանությունների, այլ Մինսկի խմբի համանախագահի խոսքերով: Ադրբեջանի այս «հետաքրքրական քաղաքականությունը» շարունակվեց նախագահ **Իլհամ Ալիեւի** օրերս Էստոնիայի արտգործնախարարությունում արած հայտարարություններով: Հայտարարություններին «Ազգ»-ը անդրադարձել է, պարզապես նշենք, որ Ալիեւի «խոսովանությունը», որ «բանակցություններին ներկա փուլում չի քննարկվում Ղարաբաղի անկախության հարցը», զարմանք է առաջացրել հենց Ադրբեջանում: Այսպես՝ ադրբեջանցի անկախ վերլուծաբան **Արիֆ Յունուսովին** զարմացրել են նախագահի հայտարարությունները. «Կարելի է ապշել նախագահի ասածներից: Չէ՞ որ այսօր բանակցություններն ընթանում են համաձայն մադրիդյան սկզբունքների: Իսկ այդ սկզբունքների վերաբերյալ մանրամասնություններ կային դեռեւս 2006-ին, հետո նաեւ 2007-ին: Ըստ այդմ՝ հայտնի է, որ ղարաբաղյան հարցի կարգավորման հիմքում ընկած է «տարածքներ՝ անկախության դիմաց» սկզբունքը, ավելի կոնկրետ՝ նախկին ԼՂԻՄ-ի շուրջը գտնվող տարածքների վերադարձից հետո Ադրբեջանը պետք է համաձայնի Ղարաբաղին անկախություն տալ՝ հանրաքվեի արդյունքներով, որը չի կարող անցկացվել ամբողջ Ադրբեջանի տարածքում, այլ միայն նախկին ԼՂԻՄ-ում: Այդ հանրաքվեի արդյունքներն արդեն իսկ հայտնի են, սակայն դա շատ ձեռնտու է Ալիեւին, քանի որ վերադարձված շրջանների շնորհիվ նա կդիմադրի իր դեմքը», «Ռեգնում»-ի հետ հարցազրույցում նշել է **Յունուսովը**: Հիշեցնենք, որ օրերս, ինչպես տեղեկացրել էինք մարտի 19-ի համարում, Ադրբեջանի արտգործնախարար **Էլմար Մամեդյարովը**, հերթական անգամ խեղաթյուրելով իրականությունը, հայտարարել էր, թե «Ղարաբաղի հարցով հանրաքվեն պետք է անցկացվի ամբողջ Ադրբեջանի տարածքով՝ համաձայն երկրի սահմանադրության»:

Ինչ վերաբերում է Ալիեւի տեսակետներին՝ կապված ժողովուրդների ինքնորոշման իրավունքի հետ, եւ արդյոք այն գերադա՞ս է տարածքային ամբողջականության սկզբունքից, Յունուսովը պատասխանել է, որ ժամանակակից աշխարհում գործում են երկակի ստանդարտներ, երբ խոսքն այն մասին է, թե ո՞րն է ավելի կարեւոր՝ տարածքային ամբողջականությո՞ւնը, թե՞ ազգերի ինքնորոշումը. «Սա կախված է կոնկրետ երկրից եւ տվյալ երկրի իրավիճակից: Նկատելի է, որ բոլոր գերտերություններն էլ ընդունում են տարածքային ամբողջականության սկզբունքը, սակայն սա բավական ֆորմալ բնույթ է կրում, քանի որ կոնկրետ Բալկաններում եւ Կովկասում միջազգային հանրությունը աղացուցում է երկակի ստանդարտների առկայությունը», եզրափակել է Յունուսովը:

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

# Ադրբեջանում ընկնում են էժանագին սենսացիաների հետեւից

Ադրբեջանում ամեն ինչ փորձում են հարմարեցնել իրենց շահերին, որպեսզի Ղարաբաղի վերաբերյալ իրենց տեսակետն արահայտեն: Այդ էժանագին մտածելակերպը հասնում է այնտեղ, որ չեն խնայում անգամ մահացածներին ու նրանց անունից խոսում: Այս անգամ ադրբեջանական մամուլը չխնայեց ու օգտագործեց Լեհաստանի հանգուցյալ նախագահ Լեխ Կաչինսկու անունը՝ գրելով, թե «Կաչինսկին հաճախ է հայտարարել, որ Ադրբեջանի տարածքային ամբողջականության կողմնակից է»: Զարմանալին այն է, որ ծավալուն հոդվածում որեւէ տեղ չի նշվում, թե ե՞րբ եւ որտե՞ղ է Լեհաստանի նախագահը խոսել Ղարաբաղի ու Ադրբեջանի մասին ու որտե՞ղ է հայտարարել Ադրբեջանի համար այդման երազելի խոսքերը:

Առավել զավեշտալին այն է, որ ի տարբերություն ողջ աշխարհում գործունեություն ծավալող դեմոկրատների, ովքեր խաղաղության եւ ժողովրդավարության կողմնակիցներ են, Ադրբեջանում դեմոկրատներն էլ, օրինակ վերցնելով «սուլթան» Ալիեւից, խոսում են ռազմական գործողությունների վերսկսման անհրաժեշտությունից: Ադրբեջանի Սոցիալ-դեմոկրատական կուսակցության նախագահ **Արազ Ալիզադեն** երեւի իշխանությունների «աչքը մտնելու» համար կամ էլ իսկապես հավատում է, որ ղարաբաղյան հարցում գերտերությունները չեն կարող որեւէ ազդեցություն ունենալ: «Հոգնել եմ կրկնելուց, որ ո՛չ Էրդողանը, ո՛չ Օբաման, ո՛չ Մեդվեդեւը, ո՛չ էլ Սարգսյանը չեն կարող լուծել ղարաբաղյան հակամարտությունը: Կարող է լուծել Իլհամ Ալիեւը՝ սկսելով ռազմական գործողություններ, հետ վերցնելով «ադրբեջանական հողերը»: Միայն ռազմական ճանապարհով է հնարավոր լուծել այդ խնդիրը», հայտարարել է «դեմոկրատ» գործիչը: Զարմանալին այն է, որ ադրբեջանցիները անտեսում են ոչ միայն ԱՄՆ-ի կամ Ռուսաստանի ազդեցությունն ու դերը, այլեւ սկսել են թերագնահատել նաեւ իրենց «մեծ եղբոր» հնարավորությունները:

Հ. Հ.

# Իսրայելցիներին կթույլատրվի արտաքսել պաղեստինցիներին Այսրհորդանանից

Իսրայելում արձակված զինվորական նոր հրամանը իշխանություններին թույլ կտա արտաքսել պաղեստինցիներին Այսրհորդանանից կամ ազատազրկել մինչեւ 7 տարի ժամկետով: Այդ մասին հաղորդում է «Հաարեց» թերթը:

Հրամանի նպատակն է կանխել մարդկանց անօրինական ներթափանցումը Այսրհորդանանի տարածք, սակայն դրա կիրառումից հետո փաստորեն օրենքից դուրս կհայտնվեն այնտեղ արդեն ապրող տասնյակ հազարավոր պաղեստինցիներ, գրում է թերթը:

Արդեն ընթացիկ շաբաթ ուժի մեջ մտնող փաստաթղթի համաձայն, իշխանությունները դիվերսանտ կհամարեն ամեն մեկին, ով Այսրհորդանանում է եւ չունի այդ տարածքում բնակվելու օրինական իրավունքը հաստատող փաստաթղթեր: Ըստ որում, կեցության իրավունքը շնորհում է Իսրայելի բանակը, իսկ օրինախախտները կդատվեն զինվորական դատարաններում:

Փոփոխություններն առաջին հերթին վերաբերում են Գազայի հատվածում գրանցված, բայց Այսրհորդանանում ապրող պաղեստինցիներին: Նոր օրենսդրության համաձայն կարող են պատժվել նաեւ կեցության իրավունքը կորցրած մարդիկ եւ պաղեստինցիների՝ ուրիշ պետություններից եկած կողակիցները:

Նոր հրամանում օգտագործվող «դիվերսանտ» բնորոշումը առաջին անգամ հայտնվել էր 1969-ին, բայց նախապես տարածվում էր միայն «թշնամական պետություններ» Եգիպտոսից, Հորդանանից, Լիբիայից եւ Սիրիայից եկած անօրինական ներգաղթյալների վրա: Ըստ նոր օրենսդրության, դիվերսանտ կարող է հայտարարվել Իսրայելի ամեն մի քաղաքացի, այդ թվում՝ հրեա:

Կես տարի առաջ բանակի հրամանատարության ստորագրած հրամանն արդեն արժանացել է իսրայելցի իրավապաշտպանների սուր քննադատությանը:

# Փիլիպիններում կաթոլիկ եկեղեցի է պայթեցվել

Փիլիպինների Իսաբելա քաղաքում (Բասիլան կղզի) երեկ պայթեցվել է կաթոլիկների եկեղեցի: Ֆրանսպրեսը հաղորդում է, որ քաղաքում տեղի է ունեցել երկու պայթյուն, որոնցից մեկն ավերել է եկեղեցին: Պայթյունների հետեւանքով երկու մարդ է զոհվել:

Ոստիկանության աղբյուրները նշում են, որ պայթյուններն իրականացրել են մի խումբ անհայտ անձինք, որոնք ավելի ուշ մարտի են բռնվել անվտանգության ծառայությունների ներկայացուցիչների հետ: Հաղորդվում է, որ մյուս պայթյունը որոշացել է կառավարական շենքերից մեկի մոտ: Երկու պայթյունները տեղի են ունեցել մի քանի րոպեի տարբերությամբ:

Ֆրանսպրեսի տվյալներով, Բասիլան կղզում գործում են իսլամիստների մի քանի զինված խմբավորումներ, այդ թվում «Աբու Սայաֆը», որը հավանաբար կապված է «Ալ Ղաիդայի» հետ:



# Բակիեւը զրկվել է անձեռնմխելիությունից

## *Սպասվում են շերբակալություններ*

**Ղրղզստանի ժամանակավոր կառավարությունը ձեւականորեն դեռ երկրի նախագահի պատշոնում մնացող Կուրմանբեկ Բակիեւին զրկել է անձեռնմխելիությունից:**

**Քաբար լրատվական գործակալությունը վկայակոչում է գլխավոր դատախազի պատշոնակատար Ազիմբեկ Բեկնազարովին, որի խոսքերով, իշխանությունները մինչեւ օրս չեն խոչընդոտել Ղրղզստանի հարավում Բակիեւի կողմնակիցների հանրահավաքների անցկացմանը: «Բայց հիմա մենք տեսնում ենք, որ նա փորձում է ժողովրդին կիսել հարավցիների եւ հյուսիսցիների», մտահոգություն է հայտնել Բեկնազարովը:**

**Նա ավելացրել է, որ Բակիեւի նկատմամբ հարուցված է քրեական գործ, եւ եթե նա չհանձնվի իշխանություններին, ապա «հատուկ ծառայությունները» կձեռնարկեն նրա ձերբակալման գործողությունը»:**

**Ինտերֆաքս գործակալությունը մեջբերում է Բեկնազարովի այն հայտարարությունը, որ Բակիեւը անհապաղ կձերբակալվի, եթե «քաղաքացիական պատերազմի կոչ անի»:**

**Անցյալ շաբաթ Բակիեւն իշխանությունից հեռացվել էր բողոքի զանգվածային ելույթների ընթացքում: Այդ ժամանակ սպանվել էր 80 մարդ, վիրավորների թիվն անցել էր հազարից: Ընդդիմության ձեւավորած ժամանակավոր կառավարության գլուխ է անցել նախկին արտգործնախարար Ռոզա Օթունբաեւան:**

**Նոր իշխանությունները Բակիեւին եւ նրա մերձավորներին մեղավոր են համարում անցյալ շաբաթվա մարդկային զոհերի համար: Աորիլի 13-ին Բիշքեկի դատարանը կարգադրեց ձերբակալել նախագահին, նրա եղբայր Ժանբեկ Բակիեւին եւ ավագ որդի Մարատին: Կարգադրված է ձերբակալել նաեւ պատշոնության նախարար Բակբոլ Կալբեւին, հատուկ ծառայության ղեկավար Մուրադ Սուսալինովին եւ արդեն հրաժարական տված վարչապետ Դանիյար Ուսենովին:**

# Գազի խոշորագույն հանքավայր Միջերկրականի արեւելքում

**Միջերկրական ծովի արեւելյան մասում՝ Լեւանտի ավազանում, հայտնաբերվել է աշխարհում գազի խոշորագույն հանքավայրերից մեկը: Այդ մասին հաղորդվում է ԱՄՆ պետական երկրաբանական ծառայության կայքէջում: Այնտեղ հրապարակված հաշվետվության տվյալների համաձայն, Լեւանտի շրջանում (այն ներառում է Իսրայելի, Սիրիայի եւ Լիբանանի ծովափնյա տարածքները) հանքավայրերի չհետախուզված պաշարները կարող են հասնել 3,43 տրիլիոն խորանարդ մետրի:**




**Ի դեպ, 2008-ին ամբողջ աշխարհում սպառվել է 3,11 տրիլիոն խորանարդ մետր գազ:**

**Ենթադրվում է, որ գազի առավել խոշոր հանքավայրերը գտնվում են Իսրայելի տարածքում:**

**Հիշյալ ծառայությունը նաեւ հաղորդում է, որ տարածաշրջանում հայտնաբերվել են նավթի պաշարներ: Ամերիկացի երկրաբանների կանխատեսումների համաձայն, դրանց ծավալը գնահատվում է 1,7 մլրդ բարել: 2008-ին աշխարհում սպառվել է 31 մլրդ բարել նավթ:**

# Թալիբները պատանդ են պահել ֆրանսիացի լրագրողներին

**«Թալիբան» շարժման գրոհայինները հրապարակել են France3 հեռուստաընկերության պատանդ լրագրողների հետ նկարահանված տեսագրությունը, որտեղ իրենք պառնում են պահել առեւանգված ֆրանսիացիներին, եթե Ֆրանսիայի կառավարությունը չկատարի իրենց պահանջները: Այդ մասին հաղորդում է «Ֆիգարո» թերթը:**

**Տեսագրության մեջ երկու պատանդները կարդում են անգլերեն եւ ֆրանսերեն տեքստեր, դիմելով Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզիին: Պատանդներն ասում են, որ սա իրենց «վերջին հաղորդումն է», եւ Սարկոզիին խնդրում են հասկանալ, որ իրենք մահվան սպառնալիքի տակ են:**

**France3-ի աշխատակիցներին եւ նրանց երեք աֆղան ուղեկցորդներին առեւանգել էին 2009-ի դեկտեմբերի 30-ին Քաբուլի շրջակայքում: Այս տարվա փետրվարի կեսերին գրոհայինները հրապարակել էին առաջին տեսագրությունը: Թալիբները Սարկոզիից պահանջում են, որ երկու ֆրանսիացիների ազատման դիմաց նա Վաշինգտոնին եւ Քաբուլին համոզի ազատ արձակել աֆղանական բանտերում պահվող թալիբներին:**

**Պատանդ լրագրողների տեսահոլովակն ուղեկցվում է անգլերեն եւ արաբերեն տեքստերով, որտեղ բառացիորեն ասվում է հետեւյալը. «Աֆղանստանի իսլամական էմիրությունը Ֆրանսիայի կառավարությանը փոխանցել էր սովորական բանտարկյալների ցանկը՝ պահանջելով նրանց ազատել երկու ֆրանսիացիների եւ նրանց աֆղան գործընկերների արձակման դիմաց, սակայն Ֆրանսիայի կառավարությունը որեւէ շահագրգռություն եւ կարեկցանք չդրսեւորեց իր քաղաքացիների ազատագրման հարցում»:**

AZG NEW PDF.qxd 13/04/2010 21:04 Page 1



ԱԶԳ **Մշակույթ**

# Ազգական կերպի եւ հմայքի նկարիչը

## Կալենցի փողոցի «Կալենց» թանգարանը

20-րդ դարի հայ գեղանկարչության լավագույն ավանդույթների կրողներից ու դրանք ինքնօրինակ գունակերտարային լուծումներով հարստացնողներից մեկը **Հարություն Կալենցն** է, նոր գունատեսությամբ օժտված նկարիչ, որի անունն ի ցավ սրտի առայժմ իր արվեստին համարժեք գնահատում եւ ճանաչում չի ստացել: Գուցե, ինչպես իրեն իմացողներն են վկայում, չափից ավելի առանձին լինելը, իր մենակությունը, իր ազնվական կերպարը, իսկ գուցե բնությունից առատորեն օժտված տաղանդն է պատճառը: Գուցե: Ինչեւէ, անարդար է նրան մեր հայացքներից տարիներ շարունակ այսպես մեկուսացնելը. Հարություն Կալենցը, գոնե վերջին տասնամյակում ցուցահանդեսային այս բազմազանության մեջ չի երեւում:

Ազգային գրադարանը՝ ղեկավարությամբ Դավիթ Սարգսյանի, այն սակավ օջախներից է, որ բարեբախտությունն ունի՝ գնահատելու ինչպես ժամանակակից, այնուամենայնիվ, որ հայ կերպարվեստ աշխարհընկալման, աշխարհատեսության սեփական կոնցեպցիան ներմուծեց՝ որակապես տարբեր. սա նոր դուռ էր հայկական արվեստի համար:

Նման հանդիպումներին բնորոշ է հուշապատումը. ավագ սերնդի արվեստագետներից ներկա էր Լեւոն Կոջոյանը: Նրա հետահայաց պատմությունների մեջ Կալենցը հիշվեց բնության հետ հարմոնիկ զգացողություններով, ինչն ակնհայտ է նկարի պոետիկ կառույցի ու գույնի գրագիտության կալենցյան ձեռագրում:

ԳԱԱ բուսաբանության ինստիտուտի երկարամյա բաժնի վարիչ, կենսաբանության գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Էլեոնորա Գաբրիելյանը՝ Կալենցի մտերմուհին, նկարչի արվեստը ապրեցնողներից մեկն է եղել. նրա բերած ծաղիկները Կալենցի կտավների մեջ շարունակում էին իրենց արվեստային նոր կյանքը. «Նա ծաղկի հոգին էր նկարում»: Էկրանին հայտնվող կալենցյան «պատկերասրահի» մեջ Էլեոնորա Գաբրիելյանը մի առանձին հմայք ուներ՝ երիտասարդ տարիների հրաբալի մի նկարով: Նրա հիշողության մեջ Հարություն Կալենցը մնացել է որպես բարեհամբույր, խիզախ, արիստոկրատ կերպար, դժվար ստեղծագործող, որին, ցավոք, չէին ընդունում, պատվերներ չկային...:

«Ծառը Հրազդանի ձորում», 1967

**Նիկոլ Աղաբաբյան, Արմեն Աթանյան, Խաչատուր Իսկանդարյան, Արեւշատ Ավագյան**, նրանց գնահատմամբ Կալենցի նկարչությունը խորապես ազգային է, որի առինքնող ուժը բնության սիրո մեջ է, նրա ազնվական ծագման, տոհմական ավանդույթների, որ «*ժառանգական ծածկագրով փոխանցվել է որդուն՝ Սարո Կալենցին: ...Գույնի ու գծի այս տարածքը տիեզերական երեւույթների հետ է կապված: Լույսը սիրում է տարածվել, այդպիսին է Կալենց գերդաստանի երեւույթը, որի լույսը տարածվում է՝ լցնելով մեր հոգեւոր-մշակութային դաշտը*» (Արեւշատ Ավագյան):

Իրավացի է ճանդակագործ **Տարիել Հակոբյանը**, թե 100-ամյակն արդեն խոսուն է, ասել է թե՝ ժամանակի ճնշությունը բռնել է: Հարություն Կալենցը նախապատրաստողներից էր 60-ականների գեղագիտական շարժման, նրա արվեստը իրավամբ ժամանակի համաշխարհային կերպարվեստի վարպետների կողքին հավասարապես լինելու իրավունքը ձեռք է բերել իր ուրույն գեղագիտությամբ, գույնի կատարելությամբ, պատկերի ամբողջականությամբ, ճշմարիտ ներշնչանքով:

*«Հպարտ եմ, որ հիշվեց հորս ազնվական լինելը: Դժվար է լինել այդպիսին. ինքը մենակ էր, շատ էջերի հետ էր մտերիմ, այդ էջերից էին Երվանդ Քոչարը, փիլիսոփա Ջիթեչյանը, խանդակագործ Արամիկ Ղարիբյանը, Էլեոնորա Գաբրիելյանը, Արտեմ Ալիխանյանը, նրանց շնորհիվ էլ կարողանում էր կյանքը շարունակել: Դժվար էր հասկանալ նրան, որովհետեւ պիտի ազնիվ լինել, բաց հոգի՝ նրան ընդունել կարողանալու համար»*-որդին՝ **Սարո Կալենցը** նկարչի արժանի ժառանգն է:

2009-ին ստեղծված «Կալենց հիմնադրամի» պատասխանատու նկարչի հարսն է՝ Լարիսա Կասասանովան: Կալենցների հոբելյանական այս տարին արդյունավորելու, գեղեցկացնելու է մեր մշակութային կյանքը. այդ մթնոլորտի հարստացմանը նպաստող հրաբալի իրագործում է «Կալենց» թանգարանի հիմնադրումը, որի բացումը տեղի կունենա ապրիլի 27-ին՝ նույնանուն փողոցում: Թանգարանի հիմքերը Հայաստան ներգաղթելուց 2 տարի անց՝ 1948-ին դրել էին **Հարություն** եւ **Արմինե Կալենց** ամուսինները: Թանգարանը, որի ստեղծման որոշումը Կալենցի մահից մեկ տարի հետո (1968) կայացրեց Խորհրդային Հայաստանի կառավարությունը, այդպես էլ մնաց առկախ, չունեցավ շարունակություն եւ ավարտ: Եվ միայն 2002-ից որդու անձնական ջանքերով եւ ընտանեկան միջոցներով սկսվեց թանգարանի կառուցումը, որը դռներն ահա կբացի արվեստասերների առաջ՝ դառնալով մշակույթի տուն. բացի Կալենցների արվեստը տեղի եւ արտերկրյա հանրությանը ներկայացնելուց, այդ ժառանգությունն ուսումնասիրելու, հիմնական հավաքածուն համալրելու, արխիվային նյութերը ամբողջացնելու հիմնական նպատակից, նաեւ ժամանակակից արվեստը ներկայացնելու խնդիր ունի՝ հնարավորություն ընձեռնելով ակտուալ ցուցադրությունների, գիտական ծրագրերի, նոր գաղափարների շուրջ քննարկումների, կինոդիտումների, մշակութային երկխոսությունների:

«Կալենց» թանգարանը այս տարի մարտին անդամագրվեց Թանգարանների միջազգային խորհրդին (ԻԿՕՄ), մշակույթի նախարարության որոշումով ընդգրկվեց «Թանգարաններին պետական աջակցություն ցուցաբերելու» ծրագրում:

Թանգարանի բացումը կնշանավորվի Հարություն Կալենցի հետահայաց ցուցահանդեսով՝ նկարչի առաջին ալբոմի շնորհանդեսով, սեպտեմբերին Արմինե Կալենցի ցուցահանդեսը հոբելյանական տարվա շարունակությունը կլինի:

Այս տարի նախատեսվում է կազմակերպել Հարություն Կալենցի ցուցահանդես նաեւ Բեյրութում՝ նկարչի լիբանանյան շրջանը (որտեղ նա ապրել եւ ստեղծագործել է 19 տարի, մինչեւ Հայաստանը ներգաղթը, մշակութային գործունեություն ծավալել, եղել է 1942-ին ստեղծված «Լիբանանի նկարիչների միության» հիմնադիրներից, դրանից առաջ մասնակցելով Նյու Յորքի միջազգային ցուցահանդեսին՝ արժանացել պատվո դիպլոմի)՝ ներկայացնող գործերով:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

ՀՅՈՒՐԱԽԱՂԵՐ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

# Իսպանահայ տենորի մենահամերգը Երեւանում

**ՀՀ սփյուռքի նախարարի հրավերով Հայաստանում է իսպանահայ անվանի երաժիշտ, երգիչ (տենոր) Վահրամ Թադեւոսյանը: Նախարար Հրանուշ Հակոբյանը հանրաճանաչ տենորին ընդունել է ու բարձր է գնահատել երգչի տաղանդը՝ օտար երկրների պատվավոր բեմերում հայ երգն իր ակունքներից բխող դասական անաղարտությամբ ներկայացնելու համար: Գերատեսչության ղեկավարը կարեւորել է նաեւ մեծահամբավ տենորի աշխատանքները Իսպանիայի հայ համայնքում:**

**Ապրիլի 13-ին Արամ Խաչատրյան համերգասրահում Վահրամ Թադեւոսյանը հանդես եկավ մենահամերգով, որը սկսվեց Մակար Եկմալյանի «Օրհնյալ է Աստված...» պատարագով եւ Վերդիի, Պուչչինիի ստեղծագործությունների կատարումներով: Համերգի 2-րդ մասը ամբողջովին նվիրվել էր հայ երգին, որ հրաբալի կատարումներով մատուցեց իսպանահայ տաղանդավոր տենորը:**

**Համերգի հասույթի մի մասը կհատկացվի Ստեփանակերտի Վահրամ Փափազյանի անվան պետական դրամատիկական թատրոնի վերակառուցմանը:**

**Վահրամ Թադեւոսյանը համերգից առաջ շնորհակալություն հայտնեց նորատեղծ սփյուռքի նախարարությանը՝ իր մենահամերգը կազմակերպելու համար: Պրն Թադեւոսյանը «Ազգին» ասաց, որ հայ հանդիսատեսը պահանջկոտ է եւ բծախնդիր, նրան պետք է միայն լավորակ երաժշտություն մատուցել: Ճանաչված տենորը նշեց նաեւ, որ ինքն արդեն ունի հայ հանդիսատեսի հետ հաղորդակցվելու պրակտիկա, եւ հայ երգը դասական մաքրությամբ ներկայացնելու իր ընտրած ճանապարհը թերեւս ժամանակի պահանջն է եւ հայ մշակույթը պահպանելու միակ միջոցը: Վահրամ Թադեւոսյանը 5 ամիս է, ինչ սանձնել է Իսպանիայի հայ մտավորականների միության նախագահի պաշտոնը, եւ նրա հետ հարցազրույցը՝ կապված իսպանահայ համայնքի գործունեությանը, կներկայացնենք առաջիկայում:**



ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# «Եվրոտեսիլին» Գերմանիան կներկայացնի Հայրապետ Առաքելյանը

**Մայիսին Վիեննայում կայանալիք «Եվրոտեսիլի երիտասարդ երաժիշտներ» (Eurovision Young Musicians-EYM) մրցույթին Գերմանիան կներկայացնի սաքսոֆոնահար Հայրապետ Առաքելյանը:**

**Եվրոպական հաղորդակցողների միության կազմակերպած հիշյալ մրցույթն անցկացվում է ամեն երկու տարին մեկ, մասնակցել կարող են եվրոպացի 15-19 տարեկան երաժիշտները. թեկնածուն պիտի ծնված լինի 1.1.1991-ից հետո: 1982-ին հիմնադրված EYM մրցույթը դարձել է միջազգային երաժշտական կարեւորագույն հարթակ: Կարող են ներկայացվել երաժշտական բոլոր գործիքները: Ի տարբերություն «Եվրոտեսիլի» երգի մրցույթի (Eurovision Song Contest), EYM-ի ժամանակ հաղթողին ընտրում է մասնագիտական ժյուրին: Վերջինս բաղկացած է դասական երաժշտության՝ աշխարհում ճանաչված անուններից:**

**2010 թվականի մրցույթին մասնակցում են Ավստրիան, Կիպրոսը, Գերմանիան, Բելառուսը, Միացյալ Թագավորությունը, Հունաստանը, Խորվաթիան, Նիդեռլանդները, Նորվեգիան, Լեհաստանը, Ռումինիան, Չեխիան, Ռուսաստանը, Շվեդիան, Սլովենիան:**

**Մրցույթի կիսաեզրափակիչ փուլը կկայանա մայիսի 8-ին եւ 9-ին Վիեննայի հեռահաղորդակցության պալատում: Մուտքը միայն հրավիրատոմսերով է լինելու: Արդյունքների մասին իրազեկելու են մրցույթից անմիջապես հետո: Եզրափակիչ փուլը կկայանա մայիսի 14-ին, ժամը 21.20-ին Վիեննայի Ռաթհաուսփլացում:**

**Միջազգային մասնագիտական ժյուրին է որոշում եզրափակիչ փուլ անցած այն 7 թեկնածուներին, ովքեր Վիեննայի ռադիոյի սիմֆոնիկ նվագախմբի ուղեկցությամբ (դիրիժոր Կորնելիուս Մայսթեր) կենդանի կատարմամբ հանդես են գալու 45 000 հանդիսատեսի առջեւ: Շուն ուղիղ հեռաստիպելու են մասնակից երկրների հեռուստաընկերությունները:**

**Հայրապետ Առաքելյանին հիշյալ մրցույթին է ներկայացրել Alliage կվինտետը: Առաքելյանը մեր մյուս հայրենաբնակ տաղանդավոր սաքսոֆոնահար Կորյուն Ասատրյանի հետ մաս է կազմում «Alliage» կվինտետին, որ Գերմանիայի տարբեր անկյուններում համերգային լայն գործունեություն է ծավալում: Առաքելյանի մասին բազմիցս ենք գրել «Ազգի» էջերում՝ 1991-ին Երեւանում ծնված երաժշտի մեջ շեշտելով բարձր պրոֆեսիոնալիզմը, արհեստական հմայքը, տաղանդին հատուկ հասունությունը: Հայրապետը 10 տարեկանից նվագում է: 1999-2003-ին եղել է պրոֆ. Արմեն Մանուկյանի աշակերտը: 13 տարեկանում եկել է Քյոլն՝ ուսանելու տեղի երաժշտական բարձրագույն դպրոցում՝ պրոֆ. Դանիել Գոթիեի դասարանում: 2001-2005-ին նա վարպետության դասեր է առել Դանիել Գոթիեի եւ Թեոդոր Կերկեցոսի մոտ: Միջազգային բազմաթիվ մրցույթների դափնեկիր է: Համերգներով ելույթ է ունեցել աշխարհի տարբեր համերգասրահներում: 2008-ից նա զուգահեռաբար ուսանում է Երեւանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայում: Հայրապետի բազմաթիվ մրցանակներին 2009-ին ավելացավ «Պատանի երաժիշտ» մրցույթի դաշնային 1-ին մրցանակը, «Երաժշտական կյանք» գերմանական հիմնադրամը նրան է հանձնել Գերտ Բուցերիուս կրթաթոշակ:**

**Քյոլնի երաժշտական բարձրագույն դպրոցի ուսանող Հայրապետ Առաքելյանին 2009-ի նոյեմբերի 22-ին Դյուսելդորֆի Վիթգենշտայն պալատում պետնախարար Բերնդ Նոյմանի ձեռամբ հանձնվեց Հյուսիս-Հռենոս-Վեստֆալյան երկրամասի Քրիստոնեա-դեմոկրատների ավագների միության սահմանած 5000 եվրո խրախուսական կրթաթոշակը:**

**Ի դեպ, Հայրապետը EYM մրցույթին մասնակից երկրորդ հայն է: 2004-ին եվրոպական հիշյալ մրցույթում Գերմանիան ներկայացրել է մեկ ուրիշ հայ՝ փայլուն երաժիշտ՝ սաքսոֆոնահար Կորյուն Ասատրյանը, արժանանալով 2-րդ մրցանակի:**

**Հուսանք, որ բախտը ժպտալու է մեր տաղանդավոր հայրենակցին, եւ Հայրապետ Առաքելյան անունը զարդարելու է EYM առաջին մրցանակը:**

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

AZG NEW PDF.qxd 13/04/2010 21:04 Page 1



ԱԶԳ **Մարզական**

# «Փյունիկը» եզրափակիչի ուղեգրի լուրջ հայտ ներկայացրեց

Ֆուտբոլի Հայաստանի գավաթի խաղարկությունը թեւակոխել է վճռորոշ փուլ: Պատվավոր մրցանակի համար պայքարը շարունակում են 4 թիմեր, որոնք կիսաեզրափակիչ հանդիպումներում կվիճարկեն գավաթը խաղարկելու իրավունքը:

Երեկ «Հրազդան» մարզադաշտում կիսաեզրափակիչի առաջին խաղում «Ուլիսը» հյուրընկալել էր երկրի չեմպիոն եւ գավաթակիր «Փյունիկին»: Հիշեցնենք, որ նախորդ խաղարկությունում եւս այս թիմերը մրցել էին կիսաեզրափակիչում եւ երկու հանդիպումներում էլ առավելության էին հասել փյունիկցիները (3-0, 1-0):

Խաղն անցավ հետաքրքրական պայքարում: Երկու թիմերն էլ ակտիվ էին գործում՝ փորձելով հասնել հաջողության: Առաջին խաղակեսն անցավ փյունիկցիների խաղային եւ տարածքային առավելությամբ, որոնք մի քանի անգամ լրջորեն սպառնացին «Ուլիսի» դարպասին: Առաջին գոլային լուրջ պահն էլ ստեղծեցին հենց փյունիկցիները: 7-րդ րոպեին Մարկոսը ճշգրիտ փոխանցումով Ալբերտ Թադեւոսյանին մեն մենակ դուրս բերեց դարպասապահի դիմաց, սակայն վերջին պահին Կրասովսկին գնդակը հանեց անկյունային: Քիչ անց արդեն վսանգավոր պահ ստեղծվեց «Փյունիկի» դարպասին, սակայն դարպասապահ Արթուր Լեսկոն ավելի շուտ հասավ գնդակին, քան Ալեքսանդր Պետրոսյանը: Շուտով վարպետությունը դրսեւորելու հերթը հասավ «Ուլիսի» դարպասապահ Մանվել Աֆրիկյանին, որը հետ մղեց Մարկոսի տուգանային վսանգավոր հարվածը:

Հաշիվը բացվեց 19-րդ րոպեին: Իր վարպետությամբ փայլեց Մարկոսը, որը «պաս» խաղարկելով Մալաֆյանի հետ, մտավ տուգանային հրապարակ, խաբս տվեց դարպասապահին ու գրավեց դարպասը: Մինչեւ ընդմիջում թիմերին չհաջողվեց նոր փոփոխություն մտցնել հաշվի մեջ:

Երկրորդ խաղակեսի սկզբում Էդգար Մալաֆյանը կարող էր կրկնապատկել հաշիվը, սակայն վրիպեց նպաստավոր դիրքից: Հետեւեց «Ուլիսի» կտրուկ հակագրոհը, որից հետո Գեորգի Կրասովսկին գլխի հարվածով գրավեց դարպասը, սակայն «Փյունիկին» օգնության եկավ դարպասածողը: Իսկ ահա 55-րդ րոպեին Ալբերտ Թադեւոսյանն իր հնարավորությունը ձեռքից բաց չթողեց ու 2-րդ գոլը խփեց: «Փյունիկը» կարող էր նաեւ 3-րդ անգամ գրավել մրցակցի դարպասը, սակայն Մարկոսի հարվածից հետո գնդակը հեռացրեց Կրասովսկին:

«Ուլիսին» այդպես էլ չհաջողվեց գոլ խփել, իսկ «Փյունիկը» բավարարվեց 2 գնդակով: Կարծում ենք, դա էլ բավական է պատասխան խաղում վստահ զգալու եւ եզրափակիչի ուղեգիր նվաճելու համար: Իսկ այսօր «Հանրապետական մարզադաշտում կմրցեն «Բանանցն» ու «Միկան»:

# Հոլիֆիլդը երազանքի իրականացման առաջին քայլը կատարեց

**Ամերիկացի հանրահայտ բոքսֆամարտիկ Էվանդեր Հոլիֆիլդը նվաճեց գերծանր քաշային կարգում WBF-ի վարկածով աշխարհի չեմպիոնի տիտղոսը: Լաս Վեգասում կայացած մենամարտում աշխարհի նախկին բացառիկ չեմպիոնը 8-րդ ռաունդում տեխնիկական նոկաուտով պարտության մատնեց հարավաֆրիկացի Ֆրանսուա Բոտային:**

**Առաջին ռաունդներն անցան հավասար պայքարում, 6-րդից սկսած Հոլիֆիլդը տիրեց նախաձեռնությանը եւ սկսեց հուժկու հարվածներ հասցնել մրցակցին: 8-րդ ռաունդում Բոտան հայտնվեց նոկդաունում, իսկ երբ հետեւեց Հոլիֆիլդի նոր գրոհը, մրցավարը դադարեցրեց մենամարտն ու հաղթանակը շնորհեց 47-ամյա բոքսֆամարտիկին:**

**Այս հաղթանակը ժամկետից շուտ Հոլիֆիլդի տոնած 28-րդ հաջողությունն էր: 47-ամյա Հոլիֆիլդը նախկինի պես երազում է նվաճել գերծանր քաշային կարգում աշխարհի բացառիկ չեմպիոնի տիտղոսը: Միայն դրանից հետո է նա մտադիր հեռանալ ռինգից:**

# Պլատինին նախազգուշացնում է Ուկրաինային

**ՈՒԵՖԱ-ի նախագահ Միշել Պլատինին պաշտոնական այցով գտնվում է Ուկրաինայում, որտեղ ծանոթանում է ֆուտբոլի 2012-ի Եվրոպայի առաջնության նախապատրաստական աշխատանքների ընթացքին: Սկզբում նա այցելեց Խարկով, որտեղից ուղեւորվեց Կիեւ: Ուկրաինայի մայրաքաղաքում նա անձամբ տեղեկացավ, թե ինչպես է ընթանում Կիեւի «Օլիմպիական» մարզադաշտի վերակառուցումը:**

**Միշել Պլատինին հանդիպել է նաեւ Ուկրաինայի նախագահ Վիկտոր Յանուկովիչին ու քննարկել նախապատրաստական աշխատանքների ընթացքը: Յանուկովիչը ՈՒԵՖԱ-ի նախագահին հավաստիացրել է, որ նախատեսված բոլոր աշխատանքները կիրականացվեն ծրագրին համապատասխան եւ Ուկրաինան կազմ ու պատրաստ կդիմավորի Եվրոպայի առաջնությունը:**

**Պլատինին կոչ է արել Ուկրաինային 2 ամսվա ընթացքում արագացնել աշխատանքները, որպեսզի մտնեն նախատեսված գրաֆիկի մեջ: Ուկրաինական քաղաքները, որոնցում պետք է անցկացվեն Եվրոպայի առաջնության հանդիպումները, շինարարական մի շարք աշխատանքներ ունեն իրականացնելու: Դրանք ներառում են ճանապարհների, կամուրջների, հյուրանոցների, մարզադաշտերի եւ այլ ենթակառուցվածքների կառուցում:**

**«Եվրոպայի առաջնությունը պետք է անցկացվի ուկրաինական չորս քաղաքներում: Սակայն եթե այդ քաղաքներից որեւէ մեկը պատրաստ չլինի, ապա խաղերը կանցկացվեն երկու քաղաքներում: Որպեսզի Ուկրաինան չկորցնի Եվրոպայի առաջնությունն իր մոտ անցկացնելու իրավունքը, ապա պետք է 2011-ի հունիսին շահագործման հանձնվի Կիեւի «Օլիմպիական» մարզադաշտը: Քանի որ երկրի նախագահն ինձ հավաստիացումներ է տվել, ապա կարծում եմ, որ ամեն ինչ ժամանակին կարվի: Կարող եմ հավաստիացնել, որ Ուկրաինայում կկայանա Եվրոպայի առաջնությունը: Սակայն երկրի կառավարությունից սպասում եմ կոնկրետ գործողություններ», հայտարարել է Միշել Պլատինին:**

# «Չելսին» ու «Պորտսմուտը» եզրափակիչում

Մայիսի 15-ին Լոնդոնի «Ուեմբլի» մարզադաշտում Անգլիայի գավաթի համար վճռորոշ մրցախաղում կհանդիպեն «Չելսին» ու «Պորտսմուտը»: «Չելսին» կիսաեզրափակիչում 3-0 հաշվով ջախջախեց «Աստոն Վիլային»: Գոլերի հեղինակներ դարձան Դրոգբան, Մալուդան եւ Լեմպարդը:

«Պորտսմուտի» ֆուտբոլիստները եզրափակիչի ուղեգիրը նվաճեցին ավելի համառ մրցապայքարում: «Տոտենհեմի» հետ խաղում հիմնական ժամանակում դարպասները մնացին անառիկ: Իսկ ահա լրացուցիչ ժամանակում Պիկյոնի եւ Բոատենգի խփած 2 գոլերի շնորհիվ «Պորտսմուտը» մտավ եզրափակիչ:

ՇԱԽՄԱՏ

# Ճակատագրական պարտություն

**Իսպանական Լա Լագունա քաղաքում ավարտված շախմատի մրցաշարում բրազիլահայ Գրիգոր-Սեւակ Մխիթարյանը 9 հնարավորից վաստակելով 6,5 միավոր, 122 մասնակիցների մեջ գրավեց 8-րդ տեղը: Վերջին 4 տուրերում նա վաստակեց 2,5 միավոր: Մխիթարյանը հաղթեց Օլեգ Կոռնեեւին ու Ստեֆանո Տատային, ոչ-ոքի խաղաց առաջատարներից մեկի՝ կուբացի Լազարո Բրուզոնի հետ: Ավարտական տուրում հայ շախմատիստի մրցակիցը լեհ Բարտոլոմեյ Հեբեռլան էր: Հաղթանակի դեպքում Մխիթարյանը կդառնար մրցաշարի միանձնյա հաղթող: Սակայն նա անհաջողության մատնվեց: Մրցաշարում կրած միակ պարտությունը ճակատագրական եղավ հայ շախմատիստի համար:**

**Հաղթող ճանաչվեց լեհ Քամիլ Միտոնը, որը գործակիցներով գերազանցեց 7 միավոր վաստակած մյուս շախմատիստներին՝ կուբացիներ Լազարո Բրուզոնին ու Յուրի Գոնսալեսին, բոսնիացի Բոյան Կուրաիցային, ռուսաստանցի Եվգենի Գլեյզերովին եւ իր հայրենակից Բարտոլոմեյ Հեբեռլային:**

# Մնաց մեկ տուր

**Դուբայում ավարտին է մոտենում շախմատի միջազգային մրցաշարը: Վերջին՝ 9-րդ տուրից առաջ Հայաստանի 5 շախմատիստներից լավագույն արդյունքն ունի Հրանտ Մելքումյանը, որը վաստակել է 6 միավոր: 6-րդ տուրում նա ոչ-ոքի խաղաց Ուլվի Բաջարանիի հետ, այնուհետեւ հաղթեց Շոջաթ Ղանեին ու Տիգրան Քոչանջյանին: Մելքումյանը կես միավորով է հետ մնում աղյուսակը գլխավորող էդուարդո Իսուրիզագայից, Վիոռել Յորդաչեսկուից եւ Տոռնիկե Սանիկիձեից: Ավարտական տուրում նա սեւերով կմրցի Էլթաջ Սաֆարլիի հետ:**

**5,5-ական միավոր ունեն Գաբրիել Սարգսյանն ու Տիգրան Պետրոսյանը: Գաբրիելը նախ պարտվեց Ալեքսեյ Ալեքսանդրովին, ապա հաղթեց Սամի Խադերին ու հաշտություն կնքեց Կոնստանտին Ցանավայի հետ: Պետրոսյանը վերջին 3 տուրերում ավելի հաջող խաղաց: Նա հաղթեց Օրհան Արդուլովին եւ Շայանգաու Սատուպրագսանին եւ ոչ-ոքի խաղաց Հարիկա Դրոնավալիի հետ: Տիգրան Քոչանջյանն ու Գեւորգ Հարությունյանը վաստակել են 5-ական միավոր:**

# Հայ հոկեյիստները ջախջախեցին վրացիներին

**Այսօր Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում կմեկնարկի տափօղակով հոկեյի աշխարհի C խմբի առաջնությունը: Մեկնարկից առաջ Հայաստանի հավաքականը, որի կազմում մեծ թիվ են կազմում սփյուռքահայ հոկեյիստները, ընկերական մրցախաղում ուժերը չափեց Վրաստանի ընտրանու հետ: Խաղից առաջ հանդիպման մասնակիցները մեկ րոպե լռությամբ հարգեցին անցյալ տարի Թուրքիայում ավտովթարից մահացած հոկեյի հայաստանի ֆեդերացիայի նախագահ Կարեն Խաչատրյանի, նրա ընտանիքի անդամների, ինչպես նաեւ Վրաստանի հոկեյի ֆեդերացիայի նախագահի հիշատակը: Թիմերը սահադաշտ էին դուրս եկել սեւ թեւկապերով:**

**Հանդիպումն անցավ մեր հոկեյիստների բացահայտ առավելությամբ: Արդեն առաջին երկու խաղափուլերից հետո մերոնք 18 անպատասխան տափօղակ էին անցկացրել վրացիների դարպասը: 3-րդ խաղափուլում հայ հոկեյիստները թուլացրին գրոհների տեմպը: Խաղն ավարտվեց նույնիսկ հոկեյի համար խոշոր՝ 22-1 հաշվով:**

**Հիշեցնենք, որ հոկեյի աշխարհի առաջնությանը մասնակցում են Հայաստանի, Մոնղոլիայի, Հյուսիսային Կորեայի եւ Հարավաֆրիկյան Հանրապետության հավաքականները: Առաջնությունը կսկսվի այսօր կայանալիք Մոնղոլիա-Հս. Կորեա հանդիպումով (ժամը 16-ին): Իսկ ժամը 20-ին մրցաստարեզ դուրս կգան Հայաստանի եւ ՀԱՀ-ի հավաքականները:**

# «Մարականան» հեղեղվել է

**Հորդառատ անձրեւների պատճառով հեղեղվել է Ռիո դե Ժանեյրոյի հանրահայտ «Մարականա» մարզադաշտը: Քրի տակ է մնացել ոչ միայն խաղադաշտը, այլեւ ամբողջությամբ հեղեղվել են հանդերձարաններն ու օժանդակ այլ կառույցներ: Ամրիլի 5-ից սկսված հորդառատ անձրեւներից առաջացած հեղեղումների պատճառով Ռիո դե Ժանեյրոյում արդեն 95 մարդ է զոհվել: Ավելի քան 1400 մարդ զրկվել է օթեւանից: Վերջին 44 տարվա ընթացքում նման քանակի տեղումներ Բրազիլիայում չէին դիտվել:**

**«Մարականա» մարզադաշտը կառուցվել է 1950-ին Բրազիլիայում կայացած ֆուտբոլի աշխարհի առաջնության հանդիպումների անցկացման նպատակով: Հենց այդ մարզադաշտում է կայացել 1950-ի աշխարհի առաջնության եզրափակիչ հանդիպումը Բրազիլիայի եւ Ուրուգվայի հավաքականների միջեւ, որում հաջողությունն ուղեկցել է ուրուգվայցիներին: 2000-ին «Մարականան» հայտարարվեց որպես Բրազիլիայի պատմական հուշարձան ու մշակութային ժառանգություն: Մարզադաշտը վերակառուցվել ու ժամանակակից տեսքի է բերվել: Նախատեսվում է 2014-ի աշխարհի առաջնության եզրափակիչ հանդիպումն անցկացնել «Մարականայում»:**

# Մրցաշարն ավարտեցին հաղթանակով

Ռեգբիի Հայաստանի հավաքականը «Ազգերի գավաթի» խաղարկությունում իր վերջին հանդիպումն անցկացրեց: Աբովյանում մեր ռեգբիստները 20-19 հաշվով հաղթեցին Սերբիայի հավաքականին: Վաստակելով 16 միավոր, ՀՀ հավաքականը խմբում գրավեց 2-րդ տեղը:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

AZG NEW PDF.qxd 13/04/2010 21:04 Page 1



ԱԶԳ **Օրվա հետքերով**

# Մ. Ույբելը՝ Հայկական կարմիր խաչի Լոռու մասնաճյուղի պատվավոր նախագահ

Ինչպես ժամանակին տեղեկացրել ենք, մեկ տարի ընդմիջումից հետո, 2008-ի հուլիսից վերսկսվեց «Նացիոնալ-սոցիալիզմի զոհերի սոցիալ-հոգեբանական եւ բժշկական սպասարկումը Հայաստանում» ծրագիրը:

2004-2006 թվականներին Գերմանական կարմիր խաչի Բադեն-Վյուրտեմբերգ երկրամասային մասնաճյուղի (ԳԿԽ ԲՎ ԵՄ) օժանդակությամբ Հայկական կարմիր խաչի ընկերության Լոռու մարզային մասնաճյուղը (ՀԿԽԸ Լոռու ՄՄ) իրականացրել էր վերոհիշյալ ծրագիրը: Ապրիլի 9-ին Մ. Ույբելը, Գերմանիայի Շտուտգարտ քաղաքից ժամանած հայտնի բարերար, քահանա Կարլ Շայդեն, Հայաստանում Գերմանական կարմիր խաչի ներկայացուցիչ Մովսես Պողոսյանը եւ Հայկական կարմիր խաչի ընկերության սոցիալական բաժնի վարիչ Ռուբեն Մարտիրոսյանը Վանաձորում էին:

Նույն օրը Ստեփան Զորյանի տունթանգարանում հյուրերի հետ կազմակերպվեց հանդիպում: ՀԿԽԸ Լոռու մարզային մասնաճյուղի նախագահ Վլադիմիր Ղարաջյանը հայտարարեց, որ Լոռու մարզի կարիքավորներին երկարատեւ ու մշտական աջակցության եւ մասնաճյուղի զարգացմանը մեծապես նպաստելու համար, մասնաճյուղի նախագահության որոշմամբ, **Միխայիլ Ույբելին** շնորհվել է Հայկական կարմիր խաչի ընկերության Լոռու մարզային մասնաճյուղի պատվավոր նախագահի կոչում:

- Ես առաջին անգամ Հայաստան եմ այցելել ավելի քան 20 տարի առաջ,- ասաց Մ. Ույբելը:- Եղել եմ երկրաշարժից տուժած շրջաններում, աշխատել հնարավորինս օգնություն ցուցաբերել: Ինձ համար հատկապես հոգեհարազատ է Հայկական կարմիր խաչի ընկերության Լոռու մարզային մասնաճյուղը, քանզի Վլադիմիր Ղարաջյանը եւ երիտասարդ կամավորները մշտապես նվիրվածությամբ ու ազնվորեն են աշխատում, հաջողությամբ իրականացնում բոլոր ծրագրերը: Ինձ համար մեծ պատիվ է այս կոչմանն արժանանալը: Օգնություն ցուցաբերելը պետք է կյանքի իմաստ լինի, օգնելով ուրիշներին՝ օգնում ենք ինքներս մեզ:

Այս ծրագրի ավարտին՝ 2006-ի հոկտեմբերին, Վանաձոր այցելեցին Գերմանիայի Բադեն-Վյուրտեմբերգ երկրամասի եվրոպական հարցերով պետնախարար Վիլլի Շտեփելեն, ԳԿԽ Բադեն-Վյուրտեմբերգ երկրամասային մասնաճյուղի նախագահ, դոկտոր Լորենց Մենցը՝ մի շարք այլ պատշտոնյաների ուղեկցությամբ, ինչպես նաեւ ԳԿԽ Բադեն-Վյուրտեմբերգի երկրամասային մասնաճյուղի արտաքին հարաբերությունների բաժնի ղեկավար Միխայիլ Ույբելը: Վերջիններս հանդիպելով ծրագրի շահառուներին, ծանոթանալով նրանց սոցիալական վիճակին եւ հաշվի առնելով ՀԿԽԸ Լոռու մարզային մասնաճյուղի լավ աշխատանքը, խոստացան միջոցներ գտնել ծրագիրը շարունակելու համար: Հուսախություն մեզ՝ նրանք կատարեցին իրենց խոստումը:

«Նացիոնալ-սոցիալիզմի զոհերի սոցիալ-հոգեբանական եւ բժշկական սպասարկումը Հայաստանում» ծրագիրն ուղղված է Երկրորդ համաշխարհային պատերազմի ռազմագերիների լիարժեք եւ արժանապատիվ կյանքի ապահովմանը՝ նրանց մեջ վստահություն ներշնչելով սեփական ուժերի նկատմամբ: Վանաձորում այժմ կա 15 շահառու, որոնց սպասարկում են ՀԿԽԸ Լոռու մարզային մասնաճյուղի բուժքույրը եւ 2 կամավոր:

1988-ից ի վեր Գերմանական կարմիր խաչի Բադեն-Վյուրտեմբերգ երկրամասային մասնաճյուղը սերտ համագործակցում է ՀԿԽԸ-ի հետ. ի սկզբանե իրականացվել են փոխադարձ այցելություններ, ինչպես նաեւ Գերմանիայի Բադեն-Վյուրտեմբերգ երկրամասի եվրոպական հարցերով պետնախարար Վիլլի Շտեփելեն, ԳԿԽ Բադեն-Վյուրտեմբերգ երկրամասային մասնաճյուղի նախագահ, դոկտոր Լորենց Մենցը՝ մի շարք այլ պատշտոնյաների ուղեկցությամբ, ինչպես նաեւ ԳԿԽ Բադեն-Վյուրտեմբերգի երկրամասային մասնաճյուղի արտաքին հարաբերությունների բաժնի ղեկավար Միխայիլ Ույբելը: Վերջիններս հանդիպելով ծրագրի շահառուներին, ծանոթանալով նրանց սոցիալական վիճակին եւ հաշվի առնելով ՀԿԽԸ Լոռու մարզային մասնաճյուղի լավ աշխատանքը, խոստացան միջոցներ գտնել ծրագիրը շարունակելու համար: Հուսախություն մեզ՝ նրանք կատարեցին իրենց խոստումը:

«Նացիոնալ-սոցիալիզմի զոհերի սոցիալ-հոգեբանական եւ բժշկական սպասարկումը Հայաստանում» ծրագիրն ուղղված է Երկրորդ համաշխարհային պատերազմի ռազմագերիների լիարժեք եւ արժանապատիվ կյանքի ապահովմանը՝ նրանց մեջ վստահություն ներշնչելով սեփական ուժերի նկատմամբ: Վանաձորում այժմ կա 15 շահառու, որոնց սպասարկում են ՀԿԽԸ Լոռու մարզային մասնաճյուղի բուժքույրը եւ 2 կամավոր:

1988-ից ի վեր Գերմանական կարմիր խաչի Բադեն-Վյուրտեմբերգ երկրամասային մասնաճյուղը սերտ համագործակցում է ՀԿԽԸ-ի հետ. ի սկզբանե իրականացվել են փոխադարձ այցելություններ, ինչպես նաեւ Գերմանիայի Բադեն-Վյուրտեմբերգ երկրամասի եվրոպական հարցերով պետնախարար Վիլլի Շտեփելեն, ԳԿԽ Բադեն-Վյուրտեմբերգ երկրամասային մասնաճյուղի նախագահ, դոկտոր Լորենց Մենցը՝ մի շարք այլ պատշտոնյաների ուղեկցությամբ, ինչպես նաեւ ԳԿԽ Բադեն-Վյուրտեմբերգի երկրամասային մասնաճյուղի արտաքին հարաբերությունների բաժնի ղեկավար Միխայիլ Ույբելը: Վերջիններս հանդիպելով ծրագրի շահառուներին, ծանոթանալով նրանց սոցիալական վիճակին եւ հաշվի առնելով ՀԿԽԸ Լոռու մարզային մասնաճյուղի լավ աշխատանքը, խոստացան միջոցներ գտնել ծրագիրը շարունակելու համար: Հուսախություն մեզ՝ նրանք կատարեցին իրենց խոստումը:

«Նացիոնալ-սոցիալիզմի զոհերի սոցիալ-հոգեբանական եւ բժշկական սպասարկումը Հայաստանում» ծրագիրն ուղղված է Երկրորդ համաշխարհային պատերազմի ռազմագերիների լիարժեք եւ արժանապատիվ կյանքի ապահովմանը՝ նրանց մեջ վստահություն ներշնչելով սեփական ուժերի նկատմամբ: Վանաձորում այժմ կա 15 շահառու, որոնց սպասարկում են ՀԿԽԸ Լոռու մարզային մասնաճյուղի բուժքույրը եւ 2 կամավոր:

1988-ից ի վեր Գերմանական կարմիր խաչի Բադեն-Վյուրտեմբերգ երկրամասային մասնաճյուղը սերտ համագործակցում է ՀԿԽԸ-ի հետ. ի սկզբանե իրականացվել են փոխադարձ

**Հայր Շայդեն**, ով Հայաստանին, մեր մարզին մշտապես աջակցություն է ցուցաբերել, ջերմ խոսքեր ասաց գերմանացի իր ընկերոջ մասին: Հայր Շայդեն ամեն տարի Հայաստանին օգնություն ցուցաբերելու համար Գերմանիայում հանգանակում է ավելի քան 150 հազար եվրո: Այս գումարի մեծ մասը ծախսվում է իր հիմնադրած «Հուսո տան» շահառուների համար:

Հայաստանի գրողների եւ ժուռնալիստների միությունների Լոռու մարզային մասնաճյուղերի կողմից հյուրերին ողջունեց եւ շնորհակալություն հայտնեց նաեւ տողերիս հեղինակը՝ բարձր գնահատելով եւ՛ Գերմանական կարմիր խաչի, եւ՛ Հայկական կարմիր խաչի ընկերության Լոռու մարզային մասնաճյուղի կատարած աշխատանքը, որոնց շնորհիվ բազմաթիվ ընտանիքներ կարողացան դիմակայել կյանքի դժվարություններին:

**ՄԱՆՎԵԼ ՄԻԿՈՅԱՆ**

## Հայտարարություն

**Ապրիլի 19-ին ժամը 14-00** Թեֆեյան Կենտրոնում (Խանջյան 50) տեղի կունենա **ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավորների հավաք**, նվիրված՝

Հայաստանի պառլամենտի 20-ամյակին Եվրոպական երկրների նախկին պառլամենտականների կազմակերպությանը «ՀՀ Գերագույն խորհուրդ պատգամավորական ակումբի» անդամակցմանը:

Հրավիրում ենք մասնակցելու բոլոր ՀՀ ԳԽ անդամներին:

*Ակումբի նախագահություն*

## ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳԻՐ

Լինելով հզոր գործարար, որն Յիրիկյան, Դուք հերթական անգամ աղացուցեցիք Ձեր բարեհամբույր վերաբերմունքը Հայաստանի յուրահանչյուր քաղաքացու նկատմամբ: Կարիքավոր հայ ժողովրդի անհատներին (բնակարաններ, հեռախոսներ, նույնիսկ գյուղերում ջրի մատակարարման) անշահախնդիր օգնություն ցուցաբերելով՝ Դուք աղացուցում եք Ձեր մտահոգությունն ու անսահման հոգատարությունը դեպի ժողովուրդը:

Ես, Երեւան քաղաքի բնակիչս, մեծ հարգանքով եմ լցված Ձեր հանդեպ: Ցանկանում եմ Ձեր բիզնեսին բարգավաճում, ցանկանում եմ մշտապես լինեք այդպիսին եւ թող Ձեզ ասված առողջություն, ուժ ու եռանդ տա՝ ի փառս մեր հայրենիքի էլ ավելի բարգավաճման:

*Ձեզ հարգող՝*
*ՌՈՒԲԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ*
Երեւան, Այգեստանի 9-րդ փող. տուն 25


## «Էկոնոմիկա եւ Իրավունք» ամսագիր

Ինչպես անթերի վարել հաշվապահությունը եւ խուսափել հաշվապահական, հարկային եւ իրավաբանական սխալներից

♦ *Օրենսդրական նորություններ* ♦ *Պարզաբանումներ* ♦ *Խորհրդատվություն*

***«Էկոնոմիկա եւ Իրավունք» - ամսագիր ղեկավարների եւ մասնագետների համար***

**Բաժանորդագրվելու համար զանգահարեք 54-24-81, 54-74-81**


ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

## ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ-ի բիզնես ինֆորմացիայի եւ խորհրդատվության բաժինն առաջարկում է կազմակերպել էքսպորտային վարկեր Սլովակիայից Հայաստան եւ ԼՂՀ

Վարկերը երաշխավորվում են Սլովակիայի պետության կողմից.

- հատուկ ադրանքային վարկատեսակ
- կարճաժամկետ, միջին ժամկետի եւ երկարաժամկետ գործարքներ
- ամբողջական կամ մասնակի ֆինանսավորում
- վարկերը տրամադրվում են ցանկացած արտարժույթով:

Այս ծրագրի շրջանակներում հնարավոր է ներկրել Եվրոպական արտադրության որակյալ ծառայություններ եւ ադրանքատեսակներ.

- բժշկական սարքավորումներ,
- գյուղատնտեսական տեխնիկա եւ նյութեր,
- շինարարական տեխնիկա, հոսքագծեր եւ նյութեր,
- կենցաղային տեխնիկա,
- տարբեր նշանակության եւ տարողության տրանսպորտային միջոցներ,
- կլիմատիզացիոն համակարգեր,
- սենդվիչներ,
- եւ այլն:

Ներկրվող ադրանքների ու ծառայությունների ոլորտների եւ տեսակների սահմանափակում չկա:

Հատուկ բարենպաստ պայմաններով իրականացվում են ՀԷԿ-երի կառուցման, սարքավորումների ներկրման եւ գործարկման աշխատանքները:

Վարկերը տրամադրվում են տարեկան 7-8% տոկոսադրույքով:

Մարման ժամկետը՝ 5-8 տարի:

Մանրամասներին ծանոթանալու համար կարող եք այցելել **www.nt.am** կամ **www.market. nt.am** էլ. կայքերը, գրել մեզ՝ **manush@nt.am** հասցեով, այցելել մեզ՝ Երեւան, Իսահակյան 28, կամ զանգահարել **+37410 56-59-65, 094 366 989** հեռախոսահամարներով:

**«Սարեն առդիս» ՍՊԸ**
լից. 027
Տնօրեն, առդիտոր Գ. Վարդանյան

*Ձեւ N1*

**ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ**
**առ 31.12.09**

| | | |
|---|---|---|
| | | ծածկագիրը |
| Կազմակերպության անվանումը | «Տելեսորիա» ՍՊԸ | |
| Փաստացի գործունեություն | վիճակախաղ | |
| հիմնական եկու տեսակները | | |
| Պետռեգիստրում գրանցման համարը | | 273.110.03820 |
| Հարկ վճարողի հաշվառման համարը | | 01550331 |
| Չափի միավորը | | մեկ հազ. ՀՀ դրամ |
| Գտնվելու վայրը | Աբովյան 26 | |
| Փաստացի գործունեության իրականացման վայրը | Տիգրան Մեծ 36 | հեռախոսը 569-769 |

| ԱԿՏԻՎ | տող | Նախորդ տարվա վերջին | Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| I. Ոչ ընթացիկ ակտիվներ | | | |
| Հիմնական միջոցներ | 010 | 245 | 74 |
| Ոչ նյութական ակտիվներ | 030 | 88,220 | 88,220 |
| Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ | 080 | 88,465 | 88,294 |
| II. Ընթացիկ ակտիվներ | | | |
| Նյութեր | 090 | 148 | 140 |
| Տրված ընթացիկ կանխավճարներ | 150 | 0 | 15 |
| Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով | 170 | 1,994,0 | 488 |
| Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ | 200 | 28,517 | 40,413 |
| Այլ ընթացիկ ակտիվներ, այդ թվում | 210 | 50 | 0 |
| Ընդամենը ընթացիկ ակտիվներ | 220 | 30,709 | 41,056 |
| ՀԱՇՎԵԿՇԻՌ | 230 | 119,174 | 129,350 |

| ՊԱՍՍԻՎ | տող | Նախորդ տարվա վերջին | Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| III. Սեփական կապիտալ | | | |
| Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար | 240 | 80,000 | 80,000 |
| Կուտակված շահույթ | 270 | 8,672 | 18,828 |
| Ընդամենը սեփական կապիտալ | 300 | 88,672 | 98,828 |
| V. Ընթացիկ պարտավորություններ | | | |
| Կարճաժամկետ փոխառություններ | 380 | 20,000 | 0 |
| Կրեդիտորական պարտքեր գնումների գծով | 390 | 753 | 266 |
| Ստացված ընթացիկ կանխավճարներ | 400 | 3,700 | 16,116 |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին | 410 | 470 | 5,436 |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովագրության գծով | 420 | 914 | 1,566 |
| Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի եւ աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով | 430 | 4,165 | 6,378 |
| Այլ կրեդիտորական պարտքեր | 450 | 500 | 760 |
| Ընդամենը ընթացիկ պարտավորություններ | 490 | 30,502 | 30,522 |
| ՀԱՇՎԵԿՇԻՌ | 500 | 119,174 | 129,350 |

*Ձեւ N2*

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**
**01/01/09-31/12/09**

| Ցուցանիշի անվանումը | տող | Նախորդ տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական) | Հաշվետու տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական) |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ | 010 | 2,835,481 | 2,793,752 |
| Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք | 020 | (2,595,728) | (2,509,218) |
| Համախառն շահույթ (վնաս) | 030 | 239,753 | 284,534 |
| Վարչական ծախսեր | 050 | (229,385) | (271,309) |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս) | 060 | 10,368 | 13,225 |
| Գործառնական այլ ծախսեր, այդ թվում | 080 | 0 | (2,032) |
| Գործառնական շահույթ (վնաս) | 090 | 10,368 | 11,193 |
| Ֆինանսական ծախսեր | 100 | (300) | (287) |
| Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս), այդ թվում | 130 | (6) | 20 |
| Սովորական գործունեությունից շահույթ (վնաս) | 140 | 10,062 | 10,926 |
| Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը | 160 | 10,062 | 10,926 |
| Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում) | 170 | (1,408) | (771) |
| Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո | 180 | 8,654 | 10,155 |

Ղեկավար
Գլխավոր հաշվապահ
Բաղյան Վանյա
Սկրտումյան Արաքսյա

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

*Հայաստանի Հանրապետության դատախազության ախտանշանների դատախազների սպասարկման եւ առարկայական վարչության առաջին կարգի մասնագետի թափուր պաշտոնի զբաղեցման համար անցկացվող բաց մրցույթի*
*/Հայաստանի Հանրապետության դատախազության ախտանշանի/*

ՀՀ դատախազության ախտանշանվածում պետական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված հիմնական գործառույթների համառոտ նկարագիրը.

վարչության փաստաթղթային սպասարկման, փաստաթղթաշրջանառության վարման աշխատանքների, իրավական ակտերի ու այլ փաստաթղթերի պահպանության եւ արխիվացման աշխատանքների, համակարգչային մուտքագրման եւ էլեկտրոնային աշխատանքների իրականացումը, անհրաժեշտ նյութեր եւ տեղեկատվություն նախապատրաստելը, ինչպես նաեւ օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված իր լիազորություններից բխող այլ գործառույթներ իրականացնելը եւ այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ (սահմանափակումներ) կրելը:

**ՀՀ դատախազության աշխատակազմում պետական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների տիրապետման վերաբերյալ ներկայացվող պահանջները.**

ա) միջին մասնագիտական կրթություն, բ) իր լիազորություններին հետ կապված իրավական ակտերի նվազագույն իմացություն, ինչպես նաեւ տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, գ) նվազագույն գիտելիքներ իր պրոֆեսիոնալ բնագավառի մասին, դ) համակարգչով աշխատելու ունակություն, ե) գրական հայերենի պաշտամունք:

**Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետն է «27» ապրիլի 2010թ.:**

**Մրցույթն անցկացվելու է 2010թ. մայիսի 13-ին ժամը «1100»-ին ՀՀ գլխավոր դատախազության շենքում /Ք.Երեւան, Կ.Սարգսյան 5/ :**

**Մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացվում են ՀՀ գլխավոր դատախազության շենքում /Ք.Երեւան, Կ.Սարգսյան 5, հեռախոս 511-627/ :**

*«13» ապրիլի 2010թ.*

**Հայաստանի Դեմոկրատական կուսակցության**
**2009թ. հաշվետվություն**

| | |
|---|---|
| Նախորդ տարվանից առաջացած մնացորդը | 1500 դրամ |
| Ֆինանսական մուտքեր | 2 244 000 դրամ |
| Ծախսեր | |
| Աշխատավարձ | 349 200 |
| Սոցիալական վճար | 94 300 |
| էլեկտրաէներգիա | 42 300 |
| Հեռախոս | 132 700 |
| Գազ | 22 500 |
| վարձավճար | 1 600 000 |
| Այլ ծախսեր | 2300 |
| Ընդամենը | 2 243 300 |
| Մնացորդը | 31.12.2009թ. դրությամբ |
| | 2200 դրամ |

*Հայաստանի Դեմոկրատական կուսակցության Կենտրոնական խորհուրդ*

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունեությունն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, սպոնսորագրված է տպագրության՝ 13.04.2010, գինը՝ 100 դրամ, տպագրվում է «Նոյեան Տաղան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: